

Գ. ԱՅԺՓԻԽՑԱՅՆ

ՄՐՈՒՑԱԿ
ՓԱՓԱԶԱՄ

ԴՐԱ Ա. Ա. Հ.

26220.

792 (47.9/25) [Симбирский]

У-93 Уральский, 9-

Уральский Симбирский:

1п.354.



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

Г. СТЕПАНЯН

АРУСЯК ПАПАЗЯН

(Жизнь и сценическая деятельность)



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1961 թ.

792(Կ7925)(092 Գևորգյանի)
Ս-92

ԱՐՈՒՈՑԱԿ ՓԱՓԱԶԱՆ

(Կյանքը և բեմական գործունեությունը)

022292



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳՈ. ՀՐԱՄԱՐՈԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրված է Հայկական ԱՍՏ-
Դիտուրյունների տեղադիմիայի
Խմբագրական-Տրատարակչական
խոհերդի ոռոշմամբ:



Աբովյան
Փափառը

Հայկական թատրոնի պատմությունը
չէ պիտո մոռանա Արուսյակ և Աղավնի
Փափազյանց արգո օբիորդների անուն-
ները:

Մ. Նալբանդյան

Արուսյակ Փափազյանը հայ պրոֆեսիոնալ
թատրոնի սկզբնավորման շրջանի նշանավոր ար-
տիստներից է:

Ժամանակաշրջանի մամուլում բավական վկա-
յություններ կան նրա մասին: Բեմական աս-
պարեզից հեռանալուց տասնյակ տարիներ հետո
էլ նրա անունը հիշվել է հայ թատրոնի պատմու-
թյանը նվիրված գրեթե բոլոր աշխատություննե-
րում և հոդվածներում, խոսվել է հայ ազգային
թատրոնի զարգացման գործում նրա մատուցած
ծառայությունների մասին:

Իր բնեմական ընդունակություններով ավագ
քրոջը զիջող Աղավնի Փափազյանը, որ թատերա-
կան ասպարեզ է մտել Արուսյակի հետ միաժա-
մանակ և բեմը թողել գրեթե նույն տարիներին,
նույնպես իր արժանի տեղն ունի հայ թատրոնի
պատմության մեջ:

Հնայած այն հանգամանքին, որ այդ երկու դերասանուհիների մատուցած ծառայությունը մեծ է եղել հայ ռեալիստական թատրոնի սկզբնավորման ու զարգացման գործում և շնայած այն փաստին, որ դեռևս մի հարյուրամյակ առաջ Մ. Նոլրանդյանը հետագա սերունդներին պատճառ է թողել շմոռանալ հայ թատրոնի այս երկու ներկայացուցիչների անունները, մինչև այսօր նրանց մասին չկա գեթ մի համառոտ աշխատառություն:

Այդ բացը լրացնելու մի նախնական փորձ է սույն գրքույիշը, որտեղ օգտագործելով ժամանակի պարբերական մամուլի տվյալները, ժամանակակիցների հիշողությունները՝ արվում է Արուսյակ Փափաղյանի կյանքի ու բեմական գործունեության հիմնական գծերը, զուգահեռ լուսաբանելով նաև Աղավնի Փափաղյանի բեմական կյանքի որոշ կողմերը:

I

Արուսյակ Փափաղյանը ծնվել է 1841 թ. Կումայի կումայի թաղում: Նրա իսկական անունը եղել է Մարիամ: Երեք տարի հետո՝ 1844 թ. ծնվում է Արուսյակի կրտսեր քույրը՝ Աղավնին:

Արուսյակ և Աղավնի քույրերի մանկությունն ու պատանեկությունը անցել է միանման պայ-

մաններում։ Նրանք միասին են սովորել, միասին՝ դեռևս պատանեկան հասակից, մտել հասարակական կյանք, նվիրվել բեմին։

Փափազյան քույրերն իրենց նախնական կրթությունն ստացել են ծննդավայրի թաղային դպրոցում։

Այդ տարիններին Կ. Պոլսում եղել են բավականաշափ հայկական տարրական դպրոցներ։ Գրեթե ամեն թաղ ունեցել է իր ծխական դպրոցը։ Գործել են նաև աղջիկների մի քանի դպրոցներ։ Սակայն դրանք աննշան գիտելիքներ են միայն տվել աշակերտներին։ Կիսագրագետ, անուս ուսուցիչները, որոնք իրենք կարիք ունեին սովորելու որևէ տարրական դպրոցում, շատ ավելի ծեծով ու ահարենկումով էին աշքի ընկնում, քան իրենց գիտելիքներով։ Նրանք հարուստներից կախման վիճակի մեջ գտնվելով, շողոքորթում էին, քծնում հարուստների երեխաներին, ամեններն ուշադրություն շղարձնելով արհեստավորական կամ աշխատավորական ընտանիքների երեխաների վրա, ինչպիսիք էին Արուսյակ և Աղավնի քույրերը, որոնց հայրը սովորական մի արհեստավոր էր։

Արուսյակի բուռն սերը գեպի ուսումը նրան մղում է համեմատարար ավելի լավ հիմքերի վրա դրված մի դպրոց։ Այդպիսի դպրոցներից էր Խասդյուղ թաղամասի Ներսիսյան վարժարանը,

որտեղ կային համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ: Այնտեղ սովորելու համար, սակայն, անհրաժեշտ էր հարուստ աղաների միջամտությունն ու բարեխոսությունը:

Արուայակի հայրը աշխատում էր պետական մաքսատանը, որը գտնվում էր Մկրտիչ ամիրա Ճեղայիրլյանի ղեկավարության տակ: Մ. Ճեղայիրլյանի կինը՝ Մրրուհին, իր խնամակալության տակ է վերցնում Արուայակի դաստիարակության դործը և միջնորդում է, որպեսզի նա ընդունվի Խասպյուղի Ներսիսյան դպրոցը:

Արուայակի դպրոցական կյանքի համեմատաբար նպաստավոր այս օրերին Ճեղայիրլյան ամիրայի դործերը վատ են գնում: Ճեղայիրլյանը մեղադրվում է ղեղծարարության մեջ: Կազմվում է հատուկ հանձնաժողով, որն ստուգում է այդ գործը և եղբակացությունները ներկայացնում կառուվարությանը: Մկրտիչ Ճեղայիրլյանը հաղիվ կարողանում է փախչել Մալթա: Մաքսատնում աշխատող հաղարավոր հայեր դուրս են շպրտվում: Աշխատանքից աղատվում է նաև Արուայակի հայրը:

Փափազյանների ընտանիքի անդամների համար ստեղծվում է տնտեսական ծանր վիճակ: Այդ օրերին է, որ նրանք թողնում են Կոմ-

Կափուն և տեղափոխվում մի այլ թաղամաս՝
Պեղեգ:

Ծանր էր նրանց նյութական վիճակը, սակայն
Արումայի համար առավել ծանր էր դպրոցից
դրկվելը:

Թյուրքիայում դպրոցներ էին բաց արել Խլ-
րոպական գաղութարարները, մասնավորապես
ֆրանսիական կաթոլիկական կազմակերպություն-
ները, ամերիկյան ու անգլիական միսիոներա-
կան ընկերությունները։ Այդ բոլոր դպրոցները
ամեն չանք դորձ էին գնում աղքատ, նյութական
անսակնախց անապահով ընտանիքների երեխա-
ներին խարելու, նրանց ամբողջովին իրենց աղքե-
ցությանը ևնթարկելու, իրենց տնտեսական և քա-
ղաքական էքսպանսիային ծառայեցնելու համար։
Պատահական չէ, որ նման դպրոցներում սովորող
հարյուրավոր երիտասարդներից շատ շատերը հե-
ռացել են իրենց ժողովրդից, մոռացել են իրենց
և լեզուն, և՛ կուլտուրան:

Նման մի դպրոց էր Պեղեգ թաղամասի ֆրան-
սիական իդական դպրոցը, որը կոչվում էր «ֆրան-
քաց դպրոց» և գտնվում էր ֆրանսիացի կուսա-
կրոն կանանց հսկողության տակ։

Այս դպրոցն է, որ ընդունվում են 11 տարե-
կան Արումայի և 8 տարեկան Աղավնին՝ կրելով

նման մի կրոնական դպրոցին հատուկ բոլոր տառապանքները: Դաժան ու մոլեսանդ այդ կանայք ինկվիզիտորական սարսափելի պայմաններով առկետական դաստիարակություն էին տալիս անմեղ աղջիկներին: Հեղձուցիչ այդ մինոլորտում Արուսյակ և Աղավնի քույրերն իրենց զգում են բանտում: Կրոնական մինոլորտը փորձում էր խեղդել նրանց մեջ այն կենսախինդ, առուցդ ու վառ ձգումները, որոնցով օժտված էին մանկական հասակից:

Դժգոհում է հատկապես Արուսյակը: Նա նկատում է, որ այդ դպրոցում ամեն ինչ հիմնված է կեղծիքի, խարդախության ու ստի վրա. բարյականություն, համեստություն քարոզող կանայք իրենք վարում էին անբարոյական կյանք: Կար, սակայն, առավել զայրացուցիչը: Դպրոցը ղեկավարող կանայք ամեն կերպ փորձում էին հայ աղջիկների մեջ մեռցնել սերը դեպի մայրենի զիրն ու պրականությունը, պատմությունն ու կուլտուրան, օտարացնել նրանց:

Հենց այս հանգամանքն է Արուսյակին ըմբուտացնում և մղում դեպի աղատություն:

Երեք տարի օտար, խորթ այդ դպրոցում սովորելուց հետո Արուսյակը, ծառանալով դպրոցի ներքին ոհմիմի դեմ, թողնում, հեռանում է:

Այդ դպրոցից դուրս գալուց հետո Փափազյանների ընտանիքը հարկադրված է լինում զեռևս 14 տարեկան Արուսյակի համար աշխատանք ձարել, որպեսզի նա կարողանա թեթևացնել ընտանիքի հոգաբ: Ծանոթների միջամտությամբ նրան ոսուցչական պաշտոն է արվում Ենի Կափուի Հայկանուցյան դպրոցում, որտեղ նա իր աշակերտուհիներին սովորեցնում է ընթերցանություն, բերականություն և ձեռագործ:

Այս պաշտոնում գտնված տարիներին է, որ Արուսյակը ծանոթանում է կապեր է հաստատում հայ թատրոնի սկզբնավորման համար աշխատող մարդկանց հետ:

II

Արևմտահայ թատրոնը այդ տասնամյակներում նոր-նոր էր ձևավորվում:

XIX դարի սկզբներից Կ. Պոլսի հարուստ հայերի տներում կազմակերպվում են ներկայացնումներ, դերավանցապես աշխարհաբար լեզվով: 1810-ական թվականներին նման ներկայացումներ են կազմակերպվում Տյուլյան ամիրաների տանը, իսկ 20-ական թվականներին՝ Պեղճյան ամիրաների, հետագայում նաև Շահինյանների և հարուստ այլ գերդաստանների տներում:

Այս ներկայացումները, սակայն, իրենց նեղ, ընտանեկան ընդդրկումով որևէ հետք չէին կարող թողնել հայ հասարակական կյանքում։ Դրանց նպատակը գերազանցապես հարուստ ամիրաների ընտանիքներին զվարճացնելն էր, մասնավորապես տոնական օրերին։ Դրանք չէին կազմակերպվում որևէ մշտական խմբի կողմից, բեմ էին բարձրանում հիմնականում սիրող ուժեր, իսկ կին արտիստներ իսպառ բացակայում էին բնմադրությունների ժամանակ։ Շատ նեղ, սահմանափակ էր բնմադրվող պիեսների թեմատիկան, դրանք ոչ այնքան պիեսներ էին, որքան բարոյախոսական, խրատական պատկերներ։

1830—40-ական թվականներին ներկայացումներ են կազմակերպվում առանձին դպրոցներում։ Դպրոցական ներկայացումները քիչ բանով եին տարբեր թատերական վերոհիշյալ փորձերից։ Դրանք արվում էին աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ, նյութը դարձյալ կրոնաբարոյական էր, երբեմն միայն բացառություն էին կազմում ֆրանսիական դրամատուրգիայից վերցված որոշ պիեսներ, մասնավորապես կոմեդիաներ։ Սակայն, այս բոլորով հանդերձ, աշակերտական ներկայացումները որոշ առավելություններ ունեին։ Դերաբաշխումը կատարվում էր առավել նըստավոր պայմաններում, ուսուցիչները բազ-

մաթիվ աշակերտների միջից ընտրում էին կարող ուժերին: Ներկայացումների ժամանակ հասրակության որոշ խավը, մասնավորապես տվյալ դպրոցի աշակերտների ծնողները, հնարավորություն էին ստանում հաղորդակից դառնալու թատերական կյանքին:

Արևմտահայ թատրոնի գարգացման համար նախապատրաստական շրջան հանդիսացող այս տասնամյակներում է, որ առանձին թագերում, մասնավորապես Պերայում, Կետիկ փաշայում, Խասպյուղում, Կատը գյուղում և այլ թաղամասերում, որոշ առաջադեմ երիտասարդներ՝ արդեն դպրոցական պատերից դուրս, կազմակերպում են ներկայացումներ ավելի լայն մասսաների համար: Այդ կարգի առաջին ներկայացումների կազմակերպման պատիվը պատկանում է Մկրտիչ Պետրիթաշլյանին, Սրապիոն Հեքիմյանին և Արմենակ Հայկոնուն:

1856 թվականի վերջերին Մ. Պետրիթաշլյանը Օրթադյուղում կազմակերպում է հայերին և թյուրքերեն լեզուներով ներկայացումներ, իր շուրջը համախմբելով շնորհալի երիտասարդների:

Հաջորդ տարին նույնպիսի աշխատանք է կատարում Մ. Հեքիմյանը՝ Պերայում: Նա մի քանի թատերասեր երիտասարդների օժանդակությամբ ներկայացումներ է տալիս ծագումով ասորի:


Նառամ և զբայրների թատրոնում, որտեղ Հաճախ դաստրոլներ էին տալիս Ֆրանսիայից և Իտալիայից եկած երկրորդական թատերախմբերը: Կ. Պոլոսում և առջասարակ ամբողջ Մերձավոր Արևելքում այդ թվականներին չկար պրոֆեսիոնալ թատրոն, որը սիստեմատիկաբար ներկայացումներ տար այս կամ այն լեզվով: Հեքիմյանն իր շուրջը համախմբում է այնպիսի երիտասարդների, որոնցից մի քանիսը հետագայում դարձան Հայ բնամիականավոր դեմքերը (Պետրոս Մաղաքյան, Հովհաննես մայոր, Թովմաս Թերզյան):

Թատերական այդ գործիշների ջանքերով կազմակերպվում են այնպիսի թատերախմբեր, որոնք պարբերաբար ներկայացումներ են տալիս: Ռւշադրությունն է դարձվում ուսպերտուարի վրա: Եվրոպական դրամատուրգիայից, մասնաւորապես Մոլիերի դրամատուրգիայից, կատարվում են առաջին թարգմանությունները: Զարկ է տրվում ինքնուրույն դրամատուրգիային:

Մրապիոն Հեքիմյանը 1857 թվականին հրատարակում է իր դրամատիկական ստեղծագործությունները՝ «Տաղք, քերթվածք և թատերգությունք» ժողովածուում: Արմենակ Հայկունին 1858 թվականից հրատարակում է «Մուսայք Մատյաց» հանդեսը, որը փաստորեն առաջին թատերական պարբերականն է Հայ իրականության մեջ:



Միքայել Զեղիկիմովսկի



Այդ պարբերականի էջերում տպագրվում են ինքնուրույն և թարգմանական պիեսներ:

Այս շրջանում ևս բացակայում է դերասանութին: Կանայք գեռ խուսափում են բեմ բարձրանալուց: Նահապետական, պահպանողական հայացքները, որոնցով առաջնորդվում էր հասարակական կարծիքը, անհնար են դարձնում բեմական տվյալներ ունեցող կանանց թատրոնի հետ կապելը: Այդ է պատճառը, որ մինչև 1850-ական թվականների վերջերը կանանց դերերը կատարում են տղամարդիկ:

Ա. Հերիմյանը 1859 թվականին իր շուրջը համախմբված գերասաններից առավել շնորհալիների ուժերով կազմում է մի թատերախոսմբ և սկսում է պարբերաբար ներկայացումներ տալ վերօնիշյալ նառում եղբայրների թատրոնում՝ բեմադրելով գերազանցապես իր պատմական ուղրերությունները: Այս ներկայացումների ժամանակ՝ առաջին անգամ բեմ է բարձրանում Արուսյակ Փափազյանը, հայ թատրոնի սկզբնավորումը նախաձեռնող մարդկանց ներշնչելով միծ հույսեր¹:

¹ Իան տվյալներ, որ մի քանի օրիորդ, արհամարհելով ժամանակի նախապաշարումները, այդ նույն առբիներին խիզախնել են և բեմ զուրս եկել: Այսպես, 1857 թ. Ա. Հերիմյանին հաջողվել է բեմ բարձրացնել օրիորդ

Սակայն Ս. Հեքիմյանին չի հաջողվում սկսված գործը շարունակել և այդ թվականին հիմք դնել պրոֆեսիոնալ մի թատերախմբի: Նա ընդհատում է իր ներկայացումները, աշխատում աճեցնել նոր, ավելի խոստումնալից կադրեր, միաժամանակ թատրոնի համար ձեռք բերել տեխնիկական հնարավորություններ՝ բեմական զգնստներ, դեկորացիաներ, շենք և այլն:

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո՝ Հեքիմյանը 1861 թվականի ամռանը կալմակերպում է «Արևելյան թատրոնը»՝ առաջին պրոֆեսիոնալ թատերախոսմբը արևմտահայ իրականության մեջ: Այդ թատերախմբի մեջ են մըտ-

Ազավակ Խամսյանին, որը կատարել է մի քանի գերեք, հայտարարությունների մեջ հիշվելով օր. Ֆաննի Պերայի վերոհիշյալ հայկական ներկայացումների ժամանակ, 1858թ. բեմ է բարձրացել նաև օր. Ազավակ Գևորգյանը: Սրանցից հետո է, որ 1859 թվականին նույն խմբի ներկայացումներին մասնակցում է Արուսյակ Փափազյանը: Բանասեր Ա. Այվազյանը Ս. Հեքիմյանի մտախն դրած մի հոգվածում տալիս է նաև այլ անուններ, ինչողեւ՝ Ազավակ Թերդյան, Թագուհի Տիգրանյան, Գ. Պալթյան: Սրանը բոլորը, սակայն, կարճ ժամանակում, տեղի տալով հասարակական կարծիքին, նահանջել են, հրաժարվել բեմից: Նրանցից մեխյն Ա. Փափազյանն է, որ քաջություն է ունեցել շարունակել, 1861 թվականին հանդես դարձով որպես հայ ասացին պրոֆեսիոնալ գերասանուհի:

նում մի քանի կարող ուժեր՝ Արուայակ Փափաղ-
յանը, Պետրոս Մաղաքյանը, Աղավնի Փափաղյա-
նը, Հովհ. Աճեմյանը, Թովմաս Թերզյանը և ուրիշ-
ներ:

30/1

«Արևելյան թատրոնի» կազմակերպումը այն-
պիսի մի հետամնաց երկրում, ինչպիսին էր սուլ-
թանական Թյուրքիան, կուլտուրական խոշոր
երևույթ էր, որ լայն արձագանք է գտնում Թյուր-
քիայում հրապարակվող տարրեր ազգությունների
մամուլում:

26220

Թյուրքական բռնապետության ձիրաններում
իր դարավոր կուլտուրայի տրադիցիաները զըժ-
վարությամբ պահպանող մի ժողովուրդ ձեռնար-
կում էր կուլտուրական այնպիսի մի նշանակա-
լից աշխատանքի, որի նմանը Թյուրքիայում
չոտեղծվեց որանից հետո մի ամբողջ հիս-
նամյակ¹:

Այս բոլորը առավել մեծ շափով բարձրացնում
են «Արևելյան թատրոնի» պատմական նշանակու-
թյունը, հասարակական կուլտուրական կյանքում
նրա կատարած կարևոր դերը:

¹ Անգամ թյուրքական պատմագրությունը ընդունում
է, որ թյուրքական թատրոնի հիմագիրները եղել են հա-
յերը, և որ այդ թատրոնի սկիզբը ունեած է համարել հա-
կոր Վարդովյանի թյուրքերն ներկայացումները 1867—
68 թթ. թատերաշրջանում:



* * *

1861 թվականի դեկտեմբերի 14-ին, «Արեկելյան թաթրոնը» տալիս է իր առաջին ներկայացումը՝ բեմադրելով Ռոմեայի «Երկու հիսնապետներ» մելոդրաման։ Բեմադրությանը մասնակցում են խմբի գրեթե բոլոր ուժերը, այդ թվում խիզախելով բեմ գուրս եկող Փափազյան քույրերը։

«Երկու հիսնապետներ» պիեսը ներկայացվում է Պերայի հայոց եկեղեցուն կից կառուցված թաթրոնի շենքում։ Թաթրոնի տնօրինությունն իր վրա է վերցնում ումն Ռուբեն Կարապետյան, որը, հետագայում, իր կյանքը չի կապում հայ բնմի հետ։ Պետրոս Մադաքյանին է վստահվում առաջին ներկայացման ուժիսորությունը և համեմատաբար փոքր մի գեր։ Հուշարարի պաշտոնը կատարում է Ռոմեանոս Սետեֆճյանը, որ հետագայում հայտնի դարձավ որպես դրամատուրգ¹։

«Արեկելյան թաթրոնի» առաջին ներկայացման

¹ «Երկու հիսնապետների» առաջին բեմադրության ժամանակ Մարտիրոս Մնակյանը կատարել է սարարապետի դերը, Հովհ. Աճեմյանը՝ Գուլիելմոսի, Գալուստ Տեր-Պողոսյանը՝ Բորելատի, Արուսյակ Փափազյանը՝ Գուլիելմոսի կնոջ Թերեզայի, Աղամենի Փափազյանը՝ Բորելատի հարսնացուի՝ Լառւրայի, Սերոբե Պենկլյանը՝ կապիտան Վալմորի, Գավիթ Թբրյանցը՝ Գուստավի, Հովսեսի Զերաշեն՝ Շկեպելի, Պետրոս Մադաքյանը՝ բանատապետի դերելը։

Հանդիսատեսներից մեկը հետագայում գրած իր հիշողություններում պատմում է, թե ինչպիսի ան-նկարագրելի խանդավառություն էր տիրում ամ-բողջ Պերա թաղամասում բեմադրության օրը, մասնավորապես ներկայացումն սկսվելուց առաջ, ինչպիսի վարակող հուզման, խոր լուսթյան պայ-մաններում է, որ դանդաղորեն բարձրանում է Մերձավոր Արևելքում առաջին պրոֆեսիոնալ թատրոնի վարագույրը և հանդիսատեսները լսում են «Ահա բարձրացավ ժամանակի վարագույրը» սիմվոլիկ երգը՝ գերասանական ամբողջ կազմի կատարմամբ, որից հետո սկսվում է բուն խաղը:

Բացի «Երկու հիսնապետներ» պիեսից, այդ նույն օրը բեմադրվել է նաև մի զավեշտ՝ «Անծա-նոթը» վերնագրով, որին նույնպես մասնակցել են Արուսյակ և Աղավնի քույրերը¹:

¹ Այս ներկայացմանը նվիրված որոշ աղբյուրներում (տես Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտառը 2, ծանոթագրություններ), հենվելով Մ. Նալբանդյանի «Աղդային թատրոն Պոլսի մեջ» հոդվածում հիշա-տակված «Երկու մոռացկոտներ» անվան վրա, նշվում է, որ «Երկու հիսնապետներ» պիեսից հետո բեմադրված զա-վեշտը կոչվել է «Երկու մոռացկոտներ», Մամուլում այդ զավեշտը կոչվել է «Անծանոթը»։ Դերասան Մնակյանը եր հիշողություններում այն կոչում է «Բունչինելլո», մի զավեշտ, որն այդ թվականներին բազմիցս բեմադրվել է

Պարբերական մամուլի էջերում պահպանվել է բավականաշափ նյութ «Երկու հիմնապետներ» պիեսի բեմադրության վերաբերյալ, որից երևոմ է, որ Պոլսի թատերասեր հասարակությունը ըստ արժանվույն գնահատել է թատերական արվեստի սկզբնավորումը արևմտահայ իրականության մեջ՝ խուռներամ դիմելով դեպի թատրոն։ Այնտեղ եղել են գրեթե բոլոր թերթերի խմբագիրները, կրթական, բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները, առհասարակ Պոլսի առաջավոր ինտելիգենցիան։

Այնտեղ, Հարություն Սվաճյանի հետ միասին, ներկա է եղել օրվա մեծ հյուրը՝ Միքայել Նալբանդյանը, որը մի տարվա ընթացքում Կ. Պոլսում ստեղծել էր համակերների մեծ շրջան, զառնալով պրոգրեսիվ գաղափարներով տողորված ինտելիգենցիայի սիրելին։

Թէ Մ. Նալբանդյանի կարծիքը որքան ծանրակշիռ էր թատերական այդ գործն սկզբնավորուների համար, երևոմ է այն բանից, որ նման մի հանդիսավոր օրվա ողջույնի ճառը խնդրվում է արտասանել Մ. Նալբանդյանին։ Այդ ճառն է, որ

Կ. Պոլսում և կոչվել է նաև «Տերը ծառա, ծառան անը»։ Մ. Նալբանդյանը եղել նկատի է ունեցել ողիկոի բովանդակությունը։

RESULTS

THE END OF THE EPILOGUE

1503 40000000 11 CARGO HOLD AREA 21.3 m

ՄԱԿԱՀՈ ՄԵՐԴԱՔԻ

ԵԶԱՆՈԹԻՒ ԽՐԱՅԻ ԵՑԻԱՅ

Сборник задач по физике для учащихся 8-11 классов

• 247 • CPT CONNECTIONS • 1-800-912-5470

1327

Arctocephalus: "Dromedary-humpbacked seal".

Verstärktes Maßnahmenkonzept für die Gewässerqualität im Landkreis Osnabrück

	$\beta_1 \beta_2 \dots \beta_n$	$\beta_1 \beta_2 \dots \beta_{n-1} \beta_n \beta_1$	$\beta_1 \beta_2 \dots \beta_{n-2} \beta_{n-1} \beta_n \beta_1 \beta_2$	$\beta_1 \beta_2 \dots \beta_{n-3} \beta_{n-2} \beta_{n-1} \beta_n \beta_1 \beta_2 \beta_3$	$\beta_1 \beta_2 \dots \beta_{n-4} \beta_{n-3} \beta_{n-2} \beta_{n-1} \beta_n \beta_1 \beta_2 \beta_3 \beta_4$
$\{1\}$	1	0	0	0	0
$\{1, 2\}$	0	1	0	0	0
$\{1, 2, 3\}$	0	0	1	0	0
$\{1, 2, 3, 4\}$	0	0	0	1	0
$\{1, 2, 3, 4, 5\}$	0	0	0	0	1

«Արեւադիմուն թատրոնի» ներկայացումներից մեկի
հայտաբարությունը:

«Ազգային թատրոն Պոլսի մեջ» վերնագրով լույս տեսակ «Մեղուա պարբերականում¹:

Մ. Նալբանդյանի վերոհիշյալ հոդվածը մի ծրագիր էր ժողովրդական, դեմոկրատական թատրոնի զարգացման համար, միաժամանակ Արուսյակ և Աղավնի Փափազյան քույրերի բեմական գործունեության առաջին գնահատականը:

Նա իր հոդվածում առաջ էր քաշում հիմնականում հետեւյալ հարցերը. նախ պահանջում էր, որ թատրոնը չդիտվի որպես ժամանցի վայր, «Այն մարդը միայն կարող է նախապաշարյալ հայացք ունենալ թատրոնականաց վերա, որ կարծում է թե թատրոնը մի տեղ է, որը զվարճանալու համար միայն երթում են մարդիկ»: «Բայց մի՞թե այդ է թատրոնի բուն և էական խորհուրդը, — հարցնում է Նալբանդյանը և շարունակում, — թատրոնի բեմը ստոր չէ ուսումնական ամբիոնից, թատրոնի բեմն

¹ Այդ օրերին, գուցե այդ երեկոյան է, որ Նալբանդյանը ստացին անգամ ծանոթանում է Արուսյակ և Աղավնի Փափազյան քույրերի հետ:

Մենք մեր մի հոդվածում փորձել ենք ցույց տալ որ ներկայացման հաջորդ օրը Փափազյան քույրերը այցելել են Մ. Նալբանդյանին, հյուրասիրվել նրա կողմից: (Տես «Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածը, «Տեղեկադիր», Հասարակական զիս., 1949, № 9):

է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայությունը և մարմնավորելով բանը կենդանի, դործնական դաշտավարներով և օրինակներով ազատում է հասարակությունը այդ դաշտավարքը երևակայությամբ միայն ըմբռնելու աշխատութենից, թատրոնի բեմն է այն բարոյական ահեղ դատաստանը, ուր արդարությունը և հանցանքը առանց աշառության ստանում են յուրյանց արժանի հատուցումը... նա մի նոր տեսակի դպրոց է, ուր ուսանում են ամեն տեսակի մարդիկը¹:

Թատրոնին հատկացնելով դաստիարակչական այդպիսի խոշոր գեր, Նալբանդյանը բնականարար հատում ուշադրություն ակետք է դարձներ ոեպերտուարի վրա, այսինքն այն հարցի վրա, թե այդ դպրոցը ի՞նչ է սովորեցնում հանդիսատեսներին, ինչպիսի՝ դաշտավարների է հազորդակից դարձնում, արդյո՞ք այդ դաշտավարները բխում են հայ ժողովրդին հուզող հարցերից, նպաստում են նրա մղած պայքարին, թե՝ ընդհակառակը, շեղում են նրան այդ պայքարից:

Այս հարցերի բարձրացումը ամենից առաջ պահանջում էր զարկ տալ ինքնուրույն դրամատուրգիային, հատկապես հայ ժողովրդի կյանքը

¹Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Բնատիր երկեր, Երևան, 1953, էջ 390:

արտացոլող դրամմատուրգիային, որքան հնարավոր է խուսափելով թարգմանական մելոդրամմաներից, որոնք ներկայացնում էին անծանոթ միջավայր, անծանոթ բարեկը, գերազանցապես ֆրանսիական սալոնային զեխությունները:

Նալբանդյանը Պոլսում ականատես էր եղել մի երեսութիւնի. նա նկատել էր, որ հվոռպական քաղաքակրթության տարածման քողի տակ հայ իրականությունն են թափանցում ամեն տեսակի այլանդակ բարքեր, որոնք արագ կերպով այլասերում են երիտասարդությանը, ապականում ընտանեկան բարքերը, ամուսնական փոխհարարերությունները և անբարոյականությունը, այլասերումը ներկայացնում որպես «դարու ոպուց» բխող անհրաժեշտություն:

«Հայոց ազգի ընտանեկան կյանքը խեղճ է,— զրում է Նալբանդյանը,— ինչպես մի տսիական ազգի կյանք, բայց խեղճությունը՝ դեպի թշվառություն կփոխվի, եթե ևվոռպական ընտանեկան բարքի զեղխությունքը և ավերանքը որպես քաղաքակրթության հատկությունք պատվաստվեն հայկական ընտանիքի վերա»¹:

Խոսքը մասնավորացնելով ֆրանսիական մեշշանական կենցաղին, որին առավել մեծ շափով

¹ Մ. Նալբանդյան, Բնափեր երկեր, էջ 392:

Հնակում էր հայ բուրժուազիան, — Նալբանդյանը նորաստեղծ հայ թատրոնին խորհուրդ էր տալիս զգուշանալ «մանավանդ անցանելու ժամանակ, այն ժայռերի մոտից, ուր գահավեժ ընկավ ֆրանսիական ընտանեկան կյանքը»¹:

Ռեպերտուարի հետ կապված այս հարցերը բարձրացնելուն զուգընթաց, Նալբանդյանը պաշտպանում էր ուսալիստական թատրոնի զարգացման, քեմական ուսալիզմի համար պայքարելու անհրաժեշտությունը, դանելով որ միայն ուսալիստական արվեստը, կյանքը ճշմարտացիորեն ու հարազատորեն արտացոլող արվեստը կկարողանա համոզել ու ազդել հանդիսատեսի վրա, նրան հասցնել հեղինակի գաղափարները: Քեմական ուսալիզմի համար Նալբանդյանը անհրաժեշտ էր համարում երկու նախապայման՝ դերասանի բնական, անբռնազրու խաղ, զգուշություն «մանավանդ շարժողությանց մեջ» և երկրորդ՝ քեմական մշակված լեզու Նա խորհուրդ էր տալիս առանձնահատուկ ուշադրություն դարձնել պիեսների «լեզվի մաքրության», հստակության և միության վերա», որովհետեւ, ըստ Նալբանդյանի, թատրոնը «ուսուցանում է գեղեցիկ հայախոսություն, մշակում է լե-

¹ Մ, Նալբանդյան, Բնակեր երկեր, էջ 392:

զուն և աննկատելի կերպով ներս է բերում ազգի մեջ ընտիր ոճեր և ազդու դարձվածքներ»¹:

Ինչպնդ է գնահատել Մ. Նալբանդյանը այդ բեմադրությունը: «Ազգային թատրոն Պոլսի մեջ» հողվածում նկատելի է ամենից առաջ օրվա նշանավոր երևոյթի քաջալերանքը: Նալբանդյանին այնքան չի զբաղեցրել խաղարկության առանձին մանրամասնությունները, որքան այն փաստը, որ «Արևելյան թատրոն» դեկավարների կողմից կազմակերպված այդ երեկոյով, ըստ էության, դրվում էր արևմտահայ պրոֆեսիոնալ թատրոնի սկիզբը, և որ նման մի կարևոր աշխատանքի նախաձեռնողները ամենից առաջ արժանի էին չերմ խրախուսանքի:

«Հայկական հառաջադիմության տարեգիրը ուկեղեն տառերով պիտի ավանդե դալոց սերունդին՝ թատրոնի սկզբնապատճառների անունները», — դրում է Մ. Նալբանդյանը:

Նա ոչ մի տողով կանգ շառնելով «Երկու հիսնապետներ» պիեսի վրա, — գերասանների խաղը ընդհանուր առմամբ համարում է բավարար:

Որոշ դերասանների մոտ նկատվող թերությունների նկատմամբ ներողամտություն հանդես բերելով, նա իր հիացմունքն է հայտնում այն բանի

¹ Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 390:

համար, որ խմբում տեսնում է «քանքար խոստացող հույսեր»:

Ովքեր են եղել ապագայի հույսեր ներշնչող այդ «քանքարավոր» դերասաններն ու դերասանուհիները: Նալբանդյանը դրանցից երկուսի անունն է միայն արձանագրել և ապագա սերունդներին հանձնել: Դրանք Արուսյակ և Աղավնի Փափազյան քույրերն են:

«Հայկական թատրոնի պատմությունը չէ պիտո մոռանա Արուսյակ և Աղավնի Փափազյանց արդու օրիորդների անունները, — գրել է նա, — որոնք առաջինն են, որ քաջությամբ ոտք կոխեցին թատերաբեմի վերա: Քաջությամբ պատերազմեցան հասարակաց նախալաշարմունքի յուրյանց վերա արած ազդեցության հետ և հաղթելով նորանց, հրապարակ իշան: Կեցցե՞ն: Մինչև այժմ ներկայացուցած թատերդությանց մեջ բավական հաջողեցան նոքա. ոչ միայն գովում ենք, այլև աղոթում ենք նոցա վերա, մոռանալով մի քանի թերությունք, որ գրեթե անհրաժեշտ են ամեն մարդու մի նոր պաշտոն կատարելու ժամանակ»¹:

Եթե Մ. Նալբանդյանը շի խոսել Արուսյակ և Աղավնի Փափազյան քույրերի խաղի մասին, ապա Նալբանդյանին այդ երեկո «Արևելյան թատրոն»

¹ Մ. Նալբանդյան գրանք, Բնափառ երկեր, էջ 391—392:

առաջնորդող, նրա կարծիքները հաշվի առնող Հ. Ավաճյանը մի ընդարձակ ոեցենզիայում, խոսելով առանձին դերակատարների մասին, կանգ է առել նաև Արուսյակի խաղի վրա, դնահատելով հատկապես այն, որ նա հաջողությամբ «ներկայացոց թերեզա կնոջ մայրական և ամուսնական սերը, իր այրիկը միսիթարելու ջանքերը, հուսահատությունը և իր ամուսինն ու իր որդիոց հայրը կորցնելու ցավը», միայն թե, գրում է հոգվածադիրը, Արուսյակը «տեղ-տեղ շատ ժանր կխոսի»¹:

Ավաճյանը նույնպիսի ջերմ տողերով գովել է Աղավնի Փափաղյանին, որը «ճշտությամբ նմանցուց կառւայի պարզամտությունը և բարեսրտությունը»:

«Երկու հիսնապետներ» ներկայացումը դիտող հանդիսականներից մեկը, իր հուշերում պատմում է, թե ինչպես հաջորդ օրը՝ Պերայում բոլորի խոսակցության նյութը եղել է այդ բեմադրությունը, թե ինչպես բոլորը հիացական խոսքերով հն միայն դնահատել Արուսյակ Փափաղյանի խորապես տըպավորիլ խաղը: Ժողովրդի կողմից դեպի այդ խաղը ցույց տրված բացառիկ հետաքրքրությունը՝ բարի նախանձն է շարժում շատ օրիորդների, որոնք նույնպես ցանկանում են նվիրվել բեմին,

¹ «Մեղու», 1861, № 147:

խաղալ Արուսյակի նման, խլել ծափեր, արժանանալ խանդաղատալից ակնարկների:

Դերասանուհի Պայծառ Ֆասովյաճյանը (այն ժամանակ դեռ օրիորդ Պայծառ Փափազյան) ներկա է եղել վերոհիշյալ ներկայացմանը. նա բեմին նվիրվելու իր հաստատ որոշումը կապում է այդ խաղի հետ, որը ճակատագրական նշանակություն է ունեցել նրա կյանքում:

Իր հիշողություններում նա գրում է. «Օրիորդ Արուսյակ Փափազյան Թերեզայի դերը ստանձնած էր, շափազանց կատարելությամբ կատարեց իր դերը, այնպես, որ ևս ալ հանդիսականաց նման չատ ու շատ հուզվեցա և գրավվեցա բեմի դյուքիչ հմայքեն: Հիմա միայն կրցած էի գտնել այն աշխարհը, որ տիեզերքը կրնար իր մեջը ամփոփել... Ալ անկարելի էր ինձ համար օթյակը մնալ, հսն, այդ վայրը նետվիլ կրաղձայի»:

Պայծառ Ֆասովյաճյանը պատմում է, թե ինչպես այդ գիշեր շի քնել, հաջորդ օրը շարունակ փորձել է կատարել Արուսյակ Փափազյանի դերից առանձին հատվածներ, համոզել է, թախանձել ծնողներին, որպեսզի թույլ տան իրեն՝ դառնալու դերասանուհի:

Հաջորդ թատերաշրջանից նա ընդունվում է «Արևելյան թատրոնի» խմբում:

III

«Երկու հիսնապետներից» հետո ուղրենելյան թատրոնի խոմբը բնմադրում է մի քանի ինքնուրույն և թարգմանական պիես, այդ թվում Մկըրտիչ Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», Թովմաս Թերզյանի «Սանդուխտ» ողբերգությունները, Սրապիոն Մանասյանի «Զաղացալանին աղջիկը» փոխադրությունը: Թարգմանական պիեսներից բնմադրման են Վիկտոր Հյուկոյի «Արքան զբոսնու», ըստ Շիլլերի դրված «Ավազակապետ»-ը, Սիլվիո Պելլիկոյի «Ֆրանչեսկա դա Ռիմինին», Պուղարտի «Նավաստի Պերտրանը» և այլն:

Այս պիեսներում Արուսյակ Փափառյանը կատարում է գլխավոր դերեր: Ժամանակի մամուլը ամենից շատ խոսել է նրա դերակատարումների մասին, բարձր գնահատել նրա խաղը, նշելով անշուշտ որոշ թերություններ:

Ըստ մամուլի գնահատականների՝ Սիլվիո Պելլիկոյի «Ֆրանչեսկա դա Ռիմինի» պիեսում, որի նյութը Դանտեի «Աստվածային կատակերգության» մեջ նկարագրվող սիրային ցնցող պատմությունն է, Արուսյակը, կատարելով Ֆրանչեսկայի դերը, վերարտադրել է ուժգին, խորը սիրո ամբողջ ուժը, դրսեորել է դժբախտ սիրոց տառապող կը-նոշ հոգեկան տառապանքները:

«Արուսյակ Փափազյան օրիորդը, — կարդում ենք ժամանակի մամուլում, — ընտիր դերասանուշիի մը կատարելությունները ցույց տվավ Ֆրանչեսկայի դերին մեջ. արտասանության, շարժվածոց վայելությամբը, մանավանդ բնականությամբը զմայեցուց հանդիսատեսները»^{1:}

Արուսյակ Փափազյանի տաղանդով հիացողների թվում էր «Մեղվի» խմբագիր Հ. Սվաճյանը: «Արևելյան թատրոնի» բեմադրությունների մասին «Մեղվում» տպագրված ուեցենդիաներում մենք գոնում ենք ջերմ տողեր Փափազյանի խաղի մասին: Անդրադառնալով 1862 թ. մարտ ամսին ներկայացված «Զաղացպանին աղջիկը» պիեսի բեմադրությանը, Հ. Սվաճյանը «Մեղվում» գրում էր. «Մանավանդ դերասանունի Արուսյակ օրիորդին ազդու և բնական կերպարը բոլոր սիրտերը շարժեցին, հոն տեսնելու էր հայոց լեզվի քաղցրությունը, որ կրխեր ազնիվ օրիորդի մը հայրենասեր շրթունքներին»^{2:}

Այս բոլորը, սակայն, ցաք ու ցրիվ ընդհանուր բնութագրումներ են, որոնք շեն կարող օգնել մեզ՝ ձանաշելու Ա. Փափազյանի բեմական ունակությունները: «Ավաղակապետ» պիեսում նրա կատա-

¹ «Մասիս», 1862, գետրվարի 24:

² «Մեղու», 1862, մարտի 20:

բած զերը միայն համեմատաբար մանրամասն վերլուծման է ենթարկվել, որը օդնում է մեզ որոշ շափով գաղափար կազմելու արևմտահայ առաջին դերասանունու արտիստական կարողությունների մասին։ Այդ առթիվ՝ ժամանակի հայտնի դործիչներից Մադաթիա Գարագաշյանը մի ընդարձակ սեցենզիա է տպել «Սեր» պարբերականում։

«Սերի» սեցենզենաը նույնպես այն կարծիքին է եղել, որ Ա. Փափազյանը արտիստական տվյալներով օժտված դերասանունի է. «Օրիորդ Արուայակը, պետք է խոստովանիլ, ի բնե դերասանունի մըն է։ Անիկա վերջին աստիճան զգայուն կերպիլ ու փափկությամբ, իսկ ողբերգական դիրքերու մեջ նաև ճիշտ նկարագրով կխաղա»¹։ Այս ընդհանուր բնութագրումից հետո Մ. Գարագաշյանը փորձում է վերլուծել նրա խաղի առանձնահատկությունները և գտնում, որ Արուայակը խաղում է անբըռնազրոս, բնական, կենդանի ու համոզիչ, առանց շինծու շարժուձեերի. «Եարժվածքներու բացատրության ու դեմքի արտահայտության մեջ բռնազրություն շըլլալը, դրից ու շարժման պատշաճությունը, որ բացարությունը կենդանի կը-նեն, նշան են թե անոր տոն տվողը խորհրդածութենեն ավելի բնությունն է»²։ Ինչպես հայտնի է,

¹ «Սեր», կ. Պոլիս, 1862, մարտի 24:

² Նույն տեղում։



Արարագիսն Հեղինեան



«Չարժողության», այսինքն ժեստիկուլյացիայի, վրա դերասան-դերասանուհիների հատուկ ուշադրությունն էր հրավիրել նալբանդյանը իր հայտնի նառում, որտեղ առաջ էր քաշվում նաև բեմական լեզվի մշակման հարցը։ Գարագաշյանին ուրախություն սկատճառող երկրորդ կողմը հենց այդ է։ «Մանավանդ ուրախ եմք արտասանության հստակությանը և հազարի մաքրությանը համար, որով նոր բեմ ելնող աշխարհաբար լեզուն իր բնական ներդաշնակությունը կունենա և ականջներ չեն տանջվիր»¹։

Ոչ միայն հայկական մամուլը, այլև Կ. Պոլսի հունական, ֆրանսիական և թյուրքական մամուլը, անդրադառնալով «Արևելյան թատրոնի» բեմադրություններին, ուշադրության առարկա են դարձրել Արուսյակ Փափազյանին, նրա մեջ տեսել արտիստական որոշակի տվյալներ։

Կ. Պոլսում հրատարակվող «Կուրիե դ' Օրիան» ֆրանսերեն պարբերականը ընդարձակ մի ռեցենզիա նվիրելով Մ. Պեշիկթաշյանի «Արշակ Բ» ողբերգության բեմադրությանը, և ցալ հայտնելով, որ լեզուն անծանոթ է եղել ռեցենզիանտին, Արուսյակ Փափազյանի մասին դրում է։

«Իսկ հայկական խմբի առաջին դերասանուհի

¹ «Սեբ», Կ. Պոլս, 1862, մարտի 24:

օրիորդը գերազանցեց բոլորին. նրա վրա տեղացած պսակների տարափոք հանդիսատեսների դուռընակության ազացույցն էր»:

Մենք մեջ բերեցինք գրեթե այն բոլոր կարծիքները, որոնք վերաբերում են Ա. Փափաղյանի առաջին գերակատարումներին: Ինչ խոսք, դրանք վկայում են, որ Փափաղյանը օժտված է եղել արտիստական որոշակի ձիրքով: Սակայն նրա մասին գրված այդ դրվագալից տողերը կարդալիս պետք է հաշվի առնել թատերական արվեստի այն մակարդակը,՝ որի պայմաններում խաղում էր Արուայակը: Արևմտահայ թատրոնի այդ նախնական աստիճանում տիրապետող բեմական ուղղությունը կլասիցիստական խաղակերպն էր, որն ընդհանրապես ոչ միայն պայքարի մեջ էր ունալիստական ուղղության հետ, այլև ռոմանտիկական մելոդրամատիկ խաղաձևի հետ: Վերջինս անգամ, թեպետ իր մեջ պարունակում էր ունալիզմի որոշ տարրեր, չէր կարող նըպաստել գերասանի արտիստական կարողությունների լիակատար դրսենորմանը, ուր մնաց թե կլասիցիստականը:

Դերասանները բաւերն արտասանում էին առանձին շեշտադրությամբ, խոսում երգելով, առանց որևէ համաշափության, մերթ թուլացնում էին ձայնը, մերթ գոռում, ճշում, աղմկում: Պիեսի

պարունակած ողբերգական հատվածների մատուցման համար ոչ թե որոնում էին բնական միջոցներ, այլ փորձում էին մասուցել ձայնի այդպիսի ելեկցներով, ավելորդ ժեստիկուլյացիայով:

Մամուլի վկայություններից երեսմ է, որ Ա. Փափազյանը, շկարողանալով հանդերձ միանգամից կտրվել կլասիցիստական բեմական ոճից, մելոդրամաներում խաղալիս նկատելի հակում է ցուցաբերել դեպի ռեալիզմը, աստիճանաբար զնացել է դեպի բնականությունն ու պարզությունը: Նա ձգտել է շափավոր լինել ժեստիկուլյացիայի մեջ, խաղացել է անբռնապրոս, համարձակ, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով առդանության վրա, ինչպես այդ վկայում է «Աերապարբերականը»:

* * *

Երբ խոսվում է «Արևելյան թատրոնի» առաջին բեմադրությունների հաջողությունների և առանձին դերասան-դերասանուհիների դրսելորած շնորհքի մասին, ինչպես ասվեց, պետք է շափանիշ ունենալ մի թատրոն, որը նոր-նոր իր առաջին քայլերն էր անում:

Ժամանակի մամուլում պահպանվել են բավականաշատ փաստեր, որոնք ցույց են տալիս, թե հայ պրոֆեսիոնալ թատրոնի առաջին ներկայա-

ցուցիչները բեմում որքան խորթ են զգացել իրենց։ Շատ հաճախ դերասանները հավելումներ են կատարել իրենց դերերում։ Նրանք բոլորովին անվարժ են եղել զրիմավորման արվեստին։ «Մեղում» քննադատում է Պետրոս Մազարյանին, որ նա բեմում հանդես է եկել սպիտակ մորուքով — բայց աև հոնքերով, այսինքն պարզապես մոռացել է հոնքերը սպիտակեցնել։ Քմահաճ ընտրություն է կատարվել նաև բեմական զգեստների որոշման ժամանակ։ Կա վկայություն, որ ուժիւրը միզանցենները որոշելիս կամճով գծել է յուրաքանչյուր դերասանի բեմական շարժման ընթացքը։ Բեմական տեխնիկայի բացակայության հետևանքով հաճախ շատ երկար են տևել ընդմիջումները, որոնք ձանձրացրել են հանդիսատեսներին։ Թատրոնը լուսավորվել է սովորական մոմերով։ Մամուլը վկայում է, թե ինչպես թատրոնի կենտրոնից կախված ջահից հանդիսատեսների վրա անընդհատ կաթելին է հալած մոմը։ Միայն մի տասնամյակ անց Պոլսի հայ թատրոններում կիրառվեց գազային լապտերը։

Այս բոլորով հանդերձ թատերասեր հաստրակությունը քաջալերել է օդուակար նախաձեռնությունը։ «Ամեն ներկայացման լեցուն էր թատերասրահը, — գրում է Հրանտ Աստուրը, — Մամաթիային, կում Կափուեն, Խասդյուղեն, Սկյու-

տարեն, Ասփորի գյուղերեն և Պոլսո մյուս թաղերեն բազմաթիվ թատերասերներ կուպային, կը-
լեցվեին թատրոնը և օր կը լլար, որ հանդիսական-
ներեն ուժանք Պերայի պանդոկներուն մեջ պառ-
կելու սենյակ չէին կրնար դտնել և կստիպվեին
սրճարաններուն մեջ անցնել զիշերը: Իսկ Պոլսո
թաղերեն եկող շատերը խումբ-խումբ լապտեր-
ներով կես զիշերին ետքը կվերադառնային իրենց
տեղերը»¹:

«Արևելյան թատրոնի» ղեկավարները երկրորդ
թատերաշրջանից առավել մեծ ուշադրություն են
դարձնում արևմտահվոպական կլասիկ դրամա-
տուրգիային: Հատուկ կարևորություն է արթում
նաև ինքնուրույն դրամատուրգիային: Լիբերտ

որոշ դործիչներ ձգտում էին զարկ տալ պատմա-
կան ողբերգություններին: Ինտելիգենցիայի առա-
վել արժատական, դեմոկրատական թեր պայքա-
րում է հայ իրականության ցավոտ կողմերը ցու-
ցագրող, ժամանակակից կյանքը արտացոլող
ինքնուրույն դրամատուրգիայի ստեղծման հա-
մար: Եվ եթե, այնուամենայնիվ, նման դրամա-
տուրգիա շստեղծվեց արևմտահայ թատրոնի զար-
դացման վաղ շրջանում, ապա դա պետք է բա-

¹ Ազգային հիվանդանոցի ընդարձակ տարեցույց, նոր
շրջան, Բ տարի, էջ 296:

յատրել ոչ այնքան տաղանդների բացակայությամբ, որքան առաջին հերթին սովորանական կառավարության քաղաքական հալածանքով:

Այժմ, մի հարյուրամյակ անց, XIX դարի 50-ական թվականների քաղաքական, հասարակական պայմաններին անծանոթ որևէ մեկը կարող է զարմանալ, թե ինչու «Արևելյան թատրոնի» ղեկավարները, որոնց մեջ նկատելի ուժ էին կազմում «Մեղվի» շուրջ համախմբված դեմոկրատ մտածողները, ոչ միայն զգուշացել են իրենց ուսումնարում սոցիալական պրոբլեմներ առաջ քաշող պիեսներին տեղ տալուց, այլև անգամ պատմական ողբերգություններ հաճախ բնմադրելուց:

«Արևելյան թատրոնի» գործունեությանը հետևում էին սովորանական կառավարության լըրտիսները:

Ապացուցված փաստ է, որ հատկապես ուսակցիոններ *Skepticus* և նրա «Երևակ» պարբերականի գաղափարները պաշտպանող մարդիկ ամենակեղաստ միջոցների են դիմել «Մեղվի» շուրջ համախմբված մարդկանց հակակառավարական հանցանքների մեջ մեղադրելու համար: Ինչպիսի հետապնդումներ ու արգելքներ են եղել, այդ մասին ժամանակի մամուլում աղոտ ակնարկներ կան միայն: Այսպես, մեր ձեռքի

տակ է «Արևելյան թատրոնի» առաջին թատերաշրջանի փակման առթիվ հրատարակված հայտարարությունը, որտեղ ի թիվս բազմաթիվ դժվարությունների, նշվում է նաև այդ հանգամանքը:

Այս հայտարարության հեղինակները պրում են. «Ամենուն հայտնի է, թե այլևայլ նկատումներ և կասկածներու տեղի շտալու հարկը չէր թողուր, որ անխտիր ամեն նյութ «Արևելյան թատրոնի մեջ ներկայացվեր» (ընդդումը մերն է — Գ. Ստ.):

IV

Այս պայմաններում «Արևելյան թատրոնը» սկսում է իր երկրորդ՝ 1862—1863 թթ. թատերաշրջանը:

Այդ թատերաշրջանում բեմադրվում են Առլիերի «Ժլատը», «Տարայուֆը», «Բոնի ամուսնությունը» և «Ակամա բժիշկը», Վոլտերի «Ալզիրը», ինչպես նաև մի շարք այլ հեղինակների պիեսները:

Արուսյակ և Աղավնի Փափազյան քույրերը երկրորդ թատերաշրջանում ևս մնում են խմբի հիմնական ուժերը, կատարելով պատասխանատու դերեր:

«Մեղուն» ուրախությամբ ավետում է, որ հետեւ Փափազյան քույրերի օրինակին, այլ

օրիորդներ նույնպես բարձրացել են բեմ՝ «Օրիորդ Ա. Փափաղյանը մինակ չլուղնելու համար և կմրցեին անոր հետ»:

Այդ նոր դերասանութիներն էին օրիորդ Եղի-
ռոս Կոմբրուկճյանը և տիկ. Մարի Պիլեղիկյանը,
որոնց մասին գովեստով է խոսում «Մեզուն»:

Այսպիսով, հենց երկրորդ տարրում «Արևելյան
թատրոնն» ունենում է չորս դերասանութի:

1862 թ. նոյեմբեր ամսին է, որ Արուսյակ Փա-
փաղյանը առաջին անգամ հնարավորություն է
ունենում հանդես գալու Մոլիերի երկերում՝ մաս-
նակցելով «Ժլատի» ներկայացմանը: Դժբախտա-
րար ժամանակի մամուլը աննշան տողեր է միայն
նվիրել այդ կարևոր բեմադրությանը և հայտնի չէ,
թե նախորդ թատերաշրջանում դերավանցապես
մելոդրամաներում և պատմական ողբերգություն-
ներում հանդես եկած Արուսյակը ինչպիսի հաջո-
պություն է ունեցել Մոլիերի կենդանի տիտ! որ
մարմնացնելու մեջ:

«Մեճմուաի հավատիս» հայտառու թյուրքերն
պարբերականում արձանագրվել է մի փաստ, որից
երևում է, որ Փափաղյան քույրերը հեշտ կերպով
չեն որ յուրացրել են բեմական սեալիզմը:

«Անհրաժեշտ է, կարծեք, որ մեկը բեմադրու-
թյան ժամանակ օրիորդներին միշտ հիշեցնի, որ
բեմում նրանք Աղավնի և Արուսյակ չեն,— զրում

է «Մենմուան» — այլ Զերբինետ ու Եասենթ են,
թէ Մոլիերի կատակերգությունում Աղավնի և
Արուա շկա»:

Մամուկում հիշատակություն շկա նաև նույն
ամիսներին բեմադրված «Տարտյուֆի» մասին,
որին նույնպես մասնակցել են Փափազյան քոյ-
րերը:

«Արևելյան թատրոնի» երկրորդ թատերաշըր-
ջանում Արուայակ Փափազյանի կատարած դերե-
րից ժլատ տողերով խոսվել է Իլտեկոնտայի մա-
սին, համանուն մելոդրամայում, որի ներկայա-
ցումը կրկնվել է երկու անգամ»:

«Ժամանակօ պահպանողական պարբերակա-
նը Արուայակ Փափազյանի կերտած Իլտեկոնտա-
յի մասին գրել է.

«Իլտեկոնտա, իր թշվառ ամուախնեն և մեկ
հատիկ որդիեն զրկված, և իր կոմս հորը անդ-
քությամբը չորս տարի բանտարկված կնոշ մասը
կատարյալ հաջողությամբ և խիստ սրտաշարժ և
զգայուն և զանակով ներկայացուց օր. Ար. Փա-
փազյանը, ինչպես որ հանդիսատեսները կրկին-
կրկին անընդհատ ծափահարություններով իրենց
դոհունակությունը հայտնեցին»:

«Արևելյան թատրոնի» առաջին երկու թատերա-
շրջաններում Արուայակ Փափազյանը կատարել է
մոտ 20 դեր, շատ հաճախ մարմնավորելով միան-

դամայն տարբեր խարակտերներ: Նա, այդ բոլոր գերերի մեջ, աննշան բացառությամբ, ցուցաբերել է իր ինքնուրույնությունը:

Իրավացի է Հրանտ Ասատրյան, երր դրում է.

«Արևելյան թատրոնի» այս առաջին երկու տարեշրջաններուն մեջ, թատերախումբին նշանավորագույն դերասանուհին էր օրիորդ Արույակ Փափազյանը:... «Մեղմի» մեջ հոգվածադիր մը «Արևելյան թատրոնի» առաջին ներկայացման վաղորդացյնին իսկ գովեստով կարձանագրե հայ թատրոնի «անդրանիկ դերասանուհին» անունը¹:

«Արևելյան թատրոնն» իր գործունեությունը առաջ էր տանում ռեակցիայի դեմ՝ մղվող բուն պայքարի պայմաններում:

Քանի դեռ հայերեն ներկայացումները դպրոցական պատերից դուրս չեին եկել և կրում էին պատահական բնույթ, — այսինքն մինչև 1861 թվականը, — չեին անհանդատացնում սովորանական կառավարությանը, մանավանդ որ այդ ներկայացումների արծարծած հարցերը դերադանցակեն երոնաբարոյական բնույթ էին կրում: Բայց հենց որ «Արևելյան թատրոնը» լայն հրապարակ դուրս

¹ Ակնաբեկը վերաբերում է Մ. Նալբանդյանին, որի անունը թյուրքական ցենզուրայի խստության հետեանքով խուսափել է տալ հոգվածադապիրը: (Տե՛ս Ազգային հիմնդանութիւն ընդարձակ օրացույց, 1927 թ.).

եկավ և նրա առաջին ներկայացումները աննախ-
ընթաց հաջողություն գտան, հոծ զանգվածները
խանդավառ վերաբերմունք ցույց տվեցին դեպի
թատրոնը, այդ հանգամանքը սկսեց լրջորեն
անհանգստացնել ռեակցիոն տարրերին և սուլ-
խանական կառավարությանը:

Ներկայացումները բացահայտում էին այն
խոշոր դերը, որ կարող էր կատարել թատրոնը՝
ժողովրդի ուշադրությունը կրոնական հարցերից
հեռացնելով հասարակական-քաղաքական հարցերի
վրա բնենութեամբ: Թատրոնը ուժգնորեն
խթանել էր հայ ժողովրդի ազգային ազատագրա-
կան պայքարի հրահրմանը: Դարերով ստրկական
վիճակի մեջ գտնվող հայ ժողովրդական խավերը
բեմում տեսնելով իրենց նախնիների սիրագոր-
ծությունները, լցվում էին հայ պետականության
վերականգնման բուռն ցանկությամբ և թատրոնը
մնդացնում կեցցեներով ու օվացիաներով: Կենսա-
զուրկ, շինծու պատմական ողբերգություններն
անդամ մեծ ոգևորություն էին պատճառում հան-
դիսատեսներին, երբեմն այնպիսի ցույցերի առիթ
տալիս, որոնք գրավում էին կառավարության
ուշադրությունը:

Թատերասեր հասարակության խանդավառու-
թյունը ավելի մեծ էր լինում, երբ պատմական
անցյալի դրվագները բեմի վրա պատկերում էին

այնպիսի տաղանդավոր դերասաններ, որպիսիք էին Արուսյակ Փափաջյանը, Հետագայում՝ Պետրոս Աղամյանը, Միրանույշը և ուրիշներ:

Թատրոնը լիովին կատարում էր լուսավորական, դաստիարակչական իր դերը: Այս բոլորը հարկադրում են հասարակական տարրեր հոսանքներին՝ ճշտել իրենց դիրքերը դեպի հայիրականություն մուտք դործող կուլտուրական այդ նոր գործոնը, որ ընդամենը մի հնդամյակ առաջ դիտվում էր որպես դպրոցական ժամանց:

«Արևելյան թատրոնի» հենց առաջին ներկայացումներից հետո մամուկում և հասարակական վայրերում բորբոքվում է մի տաք բանավեճ՝ նվիրված թատրոնի գերի գնահատմանը ընդհանրապես, հայ թատրոնի զարգացման հեռանկարների հարցերին՝ մասնավորապես: Բանավեճին մասնակցում են տարրեր հոսանքների ու խմբավորումների բոլոր հայ թերթերն ու հանդեսները, մասնակցում են տասնյակ մարդիկ:

Այդ բանավեճի սկիզբը պետք է համարել Մ. Նալբանդյանի «Աղդային թատրոն Պոլսի մեջ» նշանավոր հոդվածը: Ճիշտ է, բանավեճին մասնակցող կողմերը չեն հիշատակում Նալբանդյանի հոդվածը, սակայն, հիմնականում, կանգ են առնում նույն այն հարցերի վրա, որ բարձրացրել էր Նալբանդյանը:

Դեմոկրատական «Մեղսմ» ամբողջովին պաշտպանում էր Մ. Նալբանդյանի տեսակետները: «Մեղմի» խմբագիր Հարություն Սվաճյանը մոտիկից հետևելով «Արևելյան թատրոնի» աշխատանքին, զգալի շափով նպաստում էր Նալբանդյանի պատգամների կենսագործմանը: Նա ոչ միայն պարբերաբար տպագրվող ուսցենզիաներով էր աշխատում ազգել նորաստեղծ հայ թատրոնի ուղղության վրա, այլև գործնական աշխատանքում: Մամուկով արձանադրվել են փաստեր, որոնք ցույց են տալիս, թե «Մեղմի» խմբագիրը որքան շանք է թափել «Արևելյան թատրոնի» աշխատանքների բարեկավման ուղղությամբ: Նա հաճախակի զիկուցումներ է կարդացել դերասանական խմբի համար, շարադրել ժողովրդական թատրոնի առաջ դրված խնդիրները, միջամտել է ոհեսերտուարի որոշման հարցին, ինքը հանդես է եկել որպես հեղինակ:

Մինչդեռ լիբերալ մամուկը գերազանց հրճվանքով դրվատում էր թարգմանական պիեսները, «Մեղսմ» առաջին ներկայացման մասին դրելուց հետո հազվագետ էր խոսում նման պիեսների բնմադրության մասին, հատուկ ուշադրություն դարձնելով ինքնուրույն դրամատուրգիային:

«Արևելյան թատրոնի» առաջին թատերաշրջանի փակման առթիվ դրած ուսցենզիայում Հ. Սվաճյա-

նը քննադատում էր խմբին այն բանի համար, որ հայ ընթերցողին ոշինչ շասող պիեսներ են բեմադրում:

Սվաճյանը դեմ շէր պատմական ողբերգությունների բևմադրությանը: Ազգային ազատազրական գաղափարների արծարծումը, որին ծառայում էին պատմական ողբերգությունները, հավասարաշափ հուղում էր և՛ հայ բուրժուազիային, և՛ հայ գեմոկրատական խավերին: Մակայն, ի տարրերություն լիրերալ դրամատուրգների, որոնց ձգտումն էր պատմական ողբերգություններում ներկայացնել իշխող խավի, թագավորների ու իշխանների պայքարը օտար նվաճողների դեմ, Սվաճյանը պահանջում էր պատմական անցյալում տեսնել բուն ժողովրդին, որը պայքարուամ էր և՛ օտարերկըրյա նվաճողների, և՛ ներքին հարստահարիչների դեմ:

Նա միաժամանակ պահանջում էր, որ պատմական ողբերգություններում կրոնական, միստիկական քարոզի փոխարեն առաջ քաշվի հայրենասիրական գաղափարը: Անդրագառնալով դրամատուրգ Թ. Թերզյանի «Սանդուխտ» պիեսի ներկայացմանը, Սվաճյանը փափկանկատ ոճով քննադատում էր նրա կրոնաբարոյախոսական բովանդակությունը և դրում. «Ակն ունինք, որ արդու հնդինակին աշխատությանց հարգը օրեւ օր պիտի

Հանաշվի, թե որ Սանդուխտը կրոնասիրության շափ հայրենասեր ալ ըլլառ:

Բուրժուական առաջավոր որոշ գործիշներ պաշտպանում էին Նալբանդյանի ու Սվաճյանի տեսակետները, թատրոնը դիտելով որպես դաստիարակության մի գալրոց:

Ժամանակի հայտնի գեմքերից Մ. Գարագաջյանը բառացի պաշտպանում էր միանդամայն ձիշտ այն տեսակետը, թե թատրոնը հայելու պես պետք է ցոլացնի կյանքն իր լավ և վատ կողմերով, որպեսզի մարդիկ հետեւն լավին, զգուշանան վատից: Նա էլ պահանջում էր, որպեսզի ցուցադրվող կյանքը հասարակությանը մատուցվի ոհալիստական մեծ արվեստով, որպեսզի այն ազդի հանդիսատեսի վրա:

«Հանդիսատեսը կպահանջե, որ տեսածը ճշշմարտանման ըլլար: Առանց ճշմարտանմանության հանդիսատեսին տեսածը պատրանք մը, անուրջ մը եղած կըլլա և ոչ իրական կյանք մը. և խաղն ուրիշ նպատակ ունեցած ըլլար, եթե ոչ խարհել: Հանդիսատեսը թատրոնին մեջ ճշմարիտ կյանք կուղե տեսնել, ինչպես որ հայելի մը նայողն իր ճշմարիտ կերպարանքը իրոք եղածեն ոչ ավելի տղեղ և ոչ ավելի գեղեցիկ տեսնել կուղե»¹:

¹ «Սերբ», 1862, մարտի 24:

Պահպանողական հայացքների տեր որոշ գործիչներ ձգտում էին որքան հնարավոր է փորբացնել թատրոն հաճախողների թիվը, թատրոնից հեռու պահել մասնավորապես աշխատավորական խավերին, որոնք ամենից առավել մեծ շափով կարող էին ընկալել բեմից հասարակությանը հրամցվող գաղափարները:

«Ժամանակ» պարբերականի խմբագիր Ստ. Փափաղյանը, որի պահպանողական հայացքները սուր քննադատության է ևնթարկել մեծ երդիծառան Հ. Պարոնյանը, շհամարձակվելով բաց ի բաց զրել թատրոնի դեմ, պահանջել նրա փակումը, դիմում՝ էր խորամանկ միջոցի, զարգացնելով այն միտքը, թե թատրոնը դուցե ավելորդ չէ Պերա թաղամասի հարուստ հայերի համար, բայց շռայլություն է աշխատավորների, հատկապես այլ թաղամասերից եկող երիտասարդների համար, որոնք և՛ թատրոնի տոմսի փող են վճարում, և՛ ճանապարհածախս, և՛ հաճախ գիշերները շկարովանալով վերադառնալ իրենց տները, վճարում են հյուրանոցի համար:

Այս բոլոր հաշիվներն անելուց հետո Ստ. Փափաղյանը կտրուկ կերպով գրում էր. «Ուստի Պերայի թատրոնին մեջ հայերն ներկայացում տալու պատրաստվող դերասանական խումբը պետք է

պիտնա, որ միայն պերացիին համար ներկայացում պիտի տաք:

Այն, ինչ որ քողարկված ձևով էր ասում Ստ. Փափառյանը, ավելի բացահայտ գրում էր հայտնի ուսակցիոններ Տերոյենցը: Նա «Երենլյան թատրոնի» առաջին թատերաշրջանում բնմադրված պիեսների թարմ տպավորության տակ ուղղակի գրում էր.

«Բնակլ երբեք համոզված շնմ, և համոզվելիք ալ շունիմ, թե ազգի մը մտավորական կամ բարոյական հառաջադիմության ձեռնոտու և օգտակար և հառաջ շարժիչ կրնան ըլլալ թեատրոնները»¹:

Տերոյենցին սարսափեցնում էր այն փաստը, որ թատրոնը նկատելի վնաս էր հասցնում եկեղեցուն. երիտասարդները եկեղեցի շէին գնում, հաճախում էին թատրոն:

Նա ոչ այնքան սարսափում էր եվրոպական մելոդրամաներից, որքան ուսալիստական դրամատուրգիայից, մասնավորապես «Մոլիեր գաղիացի բանաստեղծին Տարթյուֆ ըսված կատակերգությունը մեր հայկական թեատրոնին մեջ» խաղացվելուց, որի բնմադրությունը նախապատրաստվում էր այդ օրերին և որտեղ հանդես էր դալու Արուսյակ Փափառյանը:

Հայ ինտելիգենցիային ուրախացնում էր այն

1 «Երենլյակ», 1862, № 13:

փաստը, որ եվրոպական գաղութարաբների կրոնական մոլեուանդ ազիտացիայից կուրացած, տարբեր դավանանքի հայերը,— որոնք միմյանց հետ անգամ առևտուր շէին անում,— թատրոնում կողք-կողքի նստած, ծափահարում էին իրենց պատմական անցյալը ցույց տվող դրվագները: Ինչ խոսք, որ այս հանգամանքը առաջին հերթին անհանգստացնելու էր կաթոլիկական մոլեուանդ կրոնի շատագով, վատիկանի հրահանդները կատարող մարդկանց:

Հայ կաթոլիկների օրդան «Մեհմուա» հայտառ թյուրքերեն թերթը «Արևելյան թատրոնի» գործունեության հենց առաջին ամիսներին, հազիվ միքանի ներկայացում տեսած, շտապում է մի թունոտ հոդված դրել հայ թատրոնի դեմ, մատնելով իր երկյուղը հատկապես ազգահավաքման, համերաշխության հնարավորությունից: «Թեատրո» վերնագրված այդ հոդվածը այնպիսի իրոնիկ ոճով էր դրված, որ հայ թերթերը մի պահ կասկածել էին, թե արդյոք դա ծաղը է, թե ճշմարիտ կարծիք:¹

Նորաստեղծ հայ թատրոնի դեմ բորբոքված այս պայքարը եթե սահմանափակվեր միայն մամուլով, ապա դրանից մեծ վնաս շէր լինի: Բանն

¹ «Մեհմուա» հայտառիս, 1862, գետրվար:

այն է, որ «Արևելյան թատրոնի» դեմ պայքարող-ներն իրենց թիկունքում ունեին մի կողմից սուլթանական կառավարությունը, մյուս կողմից թագուն և նույնքան նենդ մի թշնամու՝ կաթոլիկ հայերի կրոնական կենտրոնը, որը նման ձեռնարկումների խափանման համար Հռոմից համապատասխան հրահանգների հետ միասին ստանում էր վիթխարի միջոցներ, որոնք ծախսվում էին եզրիայն խորամանկությամբ:

Հայ կաթոլիկների մամուլը հրապարակով ծաղրում էր այն երազները, որ պրոգրեսիվ դորժիչները կապում էին թատրոնի դարդացման հետ:

Այս բոլորը նկատի ունենալով միայն կարելի է հասկանալ, թե ինչու բարոյական և նյութական այնքան մեծ զոհողությունների գնով ստեղծված «Արևելյան թատրոնը» առաջին թատերաշրջանում նկատելի աշխուժացում ապրելով երկրորդ թատերաշրջանի վերջում քայլայվեց¹:

¹ Հայ թատրոնի պատմությամբ դրադվողները այդ բանը բացատրել են զլիակոր զերասան Ստ. էքչյանի դժությամբ Սր. Հեքեմյանի հետո էքչյանն իր աշխատավաճը չստանալով, մի ներկայացման կեռին չի խաղացել, ոկանզակ է առաջացել և գրանից հետո թատրոնը փակվել է:

Մեր կարծիքով զա արտաքին շարժառիթ է եղել, որը շուտ հեշտությամբ կարելի էր վերացնել, եթե զրա համար չիներն ավելի կարեոր պատճառներ:

V

Իզմիրը կ. Պոլսից հետո Թյուրքիայի խոշորագույն տնտեսական և կուլտուրական կենտրոնն էր, Միջերկրական ծովում մեծ նավահանգիստ, որի միջոցով Թյուրքիան մշտական կապի մեջ էր արևմտակելրուղական երկրների հետ։ Իզմիրում դեռևս XIX դարի սկզբներից ֆրանսիական և իտալական շրջիկ թատերախմբերը ներկայացումներ են տալիս, որոնց մասնակցում են նաև Հայեր։ 1830-ական թվականներին Իզմիրի Մեսրոպյան Հայկական դպրոցում կազմակերպվում են աշակերտական ներկայացումներ իտալերեն լեզվով։ Կ. Պոլսում Հայկական թատերական շարժման աշխաժացմանը զուգընթաց այդ քաղաքում նույնական առաջադեմ երիտասարդները կազմակերպում են ներկայացումներ. այդ քաղայի վրա նույն 1861 թվականին ստեղծվում է «Կասպուրական» թատերական ընկերությունը, որին նույնական ողջունել է Մ. Նալբանդյանը «Ազգային թատրոն Պոլսի մեջ» հոդվածում։

1861—1862 թթ. թատերաշրջանում, «Կասպուրական» խումբը, իր շուրջը Համախմբելով բեմական ընդունակություններով օժտված խոստումնակից ուժեր, աստիճանաբար ձևակերպում է Իզմիրի առաջին պրոֆեսիոնալ Հայկական թա-

տերախումբը, որի մեջ աշքի ընկնող դեր է կատարում Արուայակ Փափազյանից կարճ ժամանակ հետո բնմական ասպարեզ մտած Պայծառ Փափազյանը (հետագայում տիկին Պայծառ Յասովյան):

Այդ թատերախումբը 1861 թ. նոյեմբեր ամսից սկսում է իր ներկայացումները, ունպերտուարում ունենալով նույն այն պիեսները, որոնք բնմադրվում էին Կ. Պոլսում, «Արևելյան թատրոնի» խմբի կողմից:

1862 թ. գարնանը Խղմիրի «Արշալույս Արարայան» թերթը, ամփոփելով «Վասպուրական» թատերախումբի առաջին թատերաշրջանի արդյունքները և բնութագրելով առանձին դերասան-դերասանուհիների խաղը, ջերմ տողերով է խոսում մասնավորապես Պայծառ Փափազյանի մասին:

1863 թ. աշնանը՝ «Արևելյան թատրոնի» կազմակուծումից հետո նրա աշքի ընկնող ուժերից Ստ. Եթյանը, Արուայակ և Աղավնի Փափազյան քույրերը, Հովհաննես Աննմյանը, Թովմաս Յասովյանը, Դավիթ Թրյանցը, Զերաշեն և ուրիշներ պնում են Խղմիր՝ մեծ խաղացանկով:

Խմբի ղեկավար Ստ. Եթյանը ներկայացումներն սկսելուց առաջ կատարում է նախապատրաստական զգալի աշխատանք: Թատրոնի տեխնիկական բազան ընդարձակվում է ֆրանսիական

թատրոնից բերված՝ դեկորացիաներով և բեմական պահանջման ներքությամբ, խումբը համալրվում է «Վասպուրական» թատրոնի գերասան-դերասանութիներով, որից հետո մամուկում հայտարարություն է տպագրվում, թե այդ թատերաշրջանում տրվելու է ինքնուրույն և թարգմանական հարյուր ներկայացում:

Էքչյանի այդ աղմուկ-աղաղակը միայն ունի լամի նպատակն էր հետապնդում։ Իրականում նրա ռեպերտուարում տեղ էին գտել գերազանցապես Կ. Պոլսում բեմադրված հայտնի պիեսները և մի քանի նոր մելոդրամաներ՝ եվրոպական դրամատուրգիայից։ Հարյուր ներկայացման փոխաբեն խումբը հազիվ կարողանում է տալ 45 ներկայացում, որը, անշուշտ, բավական մեծ թիվ էր։

Թատերաշրջանը սկսվում է 1863 թվականի դեկտեմբեր ամսի վերջերին։ Տրվում է «Ետաղամոլի մը կենաց 30 տարին» պիեսը, որը մի քանի անդամ բեմադրվել էր Պոլսում՝ Արուայակ Փափազյանի մասնակցությամբ։

Իզմիրի հասարակությունը առաջին անգամ էր, որ բեմում տեսնում էր Արուայակ և Աղավնի Փափազյան քույրերի խաղը, որոնց մասին այնքան դրվատական ռեցենզիաներ էր կարդացել Պոլսի հայկական, հունական, ֆրանսիական մամուլի էջերում։ Փափազյան քույրերը նույնպիսի տպավորություն են թողնում Իզմիրի հանդիսականների

վրա: Եթշանի խմբի առաջին ներկայացմանը նվիրված մի սեցենզիայի մեջ, որը տպված է «Արշալույս Արարատյան» թերթում, կարդում ենք. «Ամելյա երկրորդին մեջ (այսինքն երկրորդ գործողությունում) ամուսնո մը դորովական սիրո ապացույցն էր. Հինգերորդի մեջ՝ համբերող, բարեսիրո, խնամող, հարազատ տանտիկին մը»:

Այս տողերով սեցենզենտը ուզում էր ցույց տալ, թե տարբեր հոգեվիճակների անցումը, ինչպիսի վարպետությամբ էր պատկերում Արուսյակ Փափաղյանը միևնույն խաղում:

Այդ ներկայացումից հետո խումբը հզմիրում րեմադրում է ինքնուրույն և թարգմանական հետեւյալ պիեսները՝ «Անձնասապան իշխան» (Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ» պատմ. ողբերգությունը), Թ. Թերզյանի «Սանդովլութը», Ա. Մանասյանի «Ջրաղացպանի ազգիկը», իսկ թարգմանական ռեպերտուարից՝ Ս. Պելիկոյի «Ֆրանչեսկա դա Ռիմինի», Մոլիերի «Երկարայական Հիվանդը», Ա. Դյումայի «Կատերին Հովարտը», անծանօթ հեղինակի «Տառապյալ մայրը») և այլն:

Իզմիրի մամուլը ընդարձակ հոգվածաշարը է նվիրել հայկական վերոհիշյալ ներկայացումներին, խոսել է գրեթե բոլոր դերակատարների մասին, նշելով նրանց արժանիքներն ու թերությունները: Բայց այդ բոլորի մեջ նկատվում է առանձ-

նահատուկ վերաբերմունք դեպի Արուսյակ Փափազյանի խաղը։ Մամուլում տպված ռեցենզիաներից երեսում է, որ ներկայացումների երեկոներին հանդիսատեսների ուշադրության կենտրոնում եղել է Արուսյակը։ Նա է, որ գերազանցապես դեպի թատրոն է քաշել թատերասեր երիտասարդությանը։ Մենք այսուղ մեջը երումներ չենք անի էթցյանի խմբի մասին դրված այդ ընդարձակ հոդվածներից, մանավանդ որ դրանք մասնագիտորեն դրված ռեցենզիաներ չեն, որոնց հիման վրա հնարավոր լիներ վերականգնել Արուսյակի այս կամ այն վերակատարման ընդհանուր պատկերը։ Կրավարարվենք միայն թատերաշրջանի վերջում «Արշալույս Արարատյան» թերթում լույս տեսած ռեցենզիայի հիմնական գնահատումներով։ Այդ թերթը, կանգ առնելով Փափազյանի մի շարք դերակատարումների վրա, դրում էր.

«Օր. Արուսյակ Փափազյանը, վկայություն բերելով մինչև հիմա իր վրա եղած զանազան օրադրությանց մեջ գովությունները, կրնանք հաստատել, որ իր սեռովով ազդերնուա մեջ հիմակու հիմա միակն է։ Իր հատկությունները պետք է տեսարանին վրա գնահատել։ Երբ դերի մը մեջ է, կարծես որ անցքը ճիշտ նույն կետին գործվելու վրայ է։ Իր հաջողությամբը որևէ մասին մեջ, կարող է կարեկցությունդ, համակրությունդ, ատելությունդ

և գլուխյունդ շարժելու։ Կզկա և կզգացնե։ Քիչ
անդամ կսխալմի, ան ալ շատ անդամ ուրիշ
պատճառված է»։

Թէ Արուսյակ Փափազյանի նկատմամբ Խղմի-
րի հասարակության ջերմ վերաբերմունքը ինչպի-
սի աստիճանին է հասել, երեսում է ի նպաստ նրան
որված ներկայացման օրը ցուցաբերված ցնծալից
վերաբերմունքից։ Էքչյանի խումբը 1864 թ. հուն-
վարի 24-ին ի նպաստ Արուսյակ Փափազյանի
րիմադրում է «Տառապյալ մայրը» պիեսը, որտեղ
պլխավոր գերը կատարում է Արուսյակը։ Արուս-
յակն այդ օրը ոչ միայն ստանում է բազմաթիվ
թանկարժեք նվերներ, ծաղկեպսակներ, այլև ծաղ-
կեպսակներին կապված աղավնիներ, որը բացտ-
ոիկ երեսույթ էր և կատարվում էր արտակարդ դեպ-
քերում։ Վերոհիշյալ ներկայացումներից հետո
Արուսյակը արտասանում է իր շնորհակալության
հառը, — որից հետո ծափահարությունների տա-
րափի մեջ թատրոնում բաց են թողնում աղավնի-
ներ, իսկ օթյակներից ձյան փաթիլների նման ցած
են սահում Արուսյակ Փափազյանին նվիրված
ոտանավորներ պարունակող թերթիկներ։ Ժամա-
նակի մամուլում պահպանվել է դրանցից մեկը
միայն, որը, շնայած իր պրիմիտիվ կառուցվածքին,
գեղարվեստական թուղթությանը, ուշադրավ է մի
կողմից այդ ժամանակաշրջանի հասարակական

մտայնության, մյուս կողմից Արուսյակ Փափազյանի նկատմամբ եղած չերմ վերաբերմունքը դնահատելու տևսակենտից:

Ավելորդ շենք համարում մեջ բերել վերոհիշյալ ուսանավորը ամբողջությամբ.

Թատերական երկնից մեջտեղ,
Ո՞ Արուսյակ, շողշողավոր,
Զմյուռնիո մեջ փայլի տստեղ.
Այդ պարպեր փայն արհեստավոր,
Զմյուռնացիք դքեզ տեսան
Որ շատոնց է կրաղձային,
Եվ շնորհացդ դմայլեցան
Որ միակ ես աննման ազգին:

Դուն որ դերիդ շնորհք տալ գիտես,
Ո քաջ գուսանդ ավագումի.
Գովեստ, պսակ, ծափք, շատ քիչ են քեզ.
Քեզ բան մըն ալ թող շի պակսի,
Կեցցես աստղդ թատերական,
Կեցցես, կեցցես, ազգին պարծանք.
Որ պատվեցիր զվասպուրականն,
Անմահ անվանդ այժմ փառք կուտանք:

Արուսյակ Փափազյանի խաղով հիանում են բոլորը: Հարյուրավոր երիտասարդներ են հմայ-

վուա՞ն նրա ոչ միայն բեմական տվյալներով, այլև գեղեցկությամբ։ Շատերը հայտնում են իրենց գգացումները, որոնց Արուսյակը պատասխանում է մերժումով։ Միայն նրանցից մեկն է, որ իր սիրո արձագանքն է գտնում արտիստուհու սրտում։ Այդ՝ նկարիչ Սոփոն Պեղիրճյանն էր, որը ևկել էր իզմիր հայոց եկեղեցու նկարները նորոգելու։ Նա հիանում է Արուսյակի խաղով։ Արուսյակն էլ, դիտելով նրա նկարները, հափշտակվում է նրա տաղանդով։ Փոխադարձ համակրանքը հանդում է համաձայնության և նրանք ամուսնանում են։

Արուսյակ Փափազյանին թվում է, թե այդ երջանիկ ամուսնությամբ սկսվում է կյանքի արշալույսը, հորիզոններ են բացվում իր առաջ, նոր լուսաշող ապագա է ուրվագծվում հեռվում։ Նա ամեն բանի մասին մտածում է, երջանիկ ծրագրեր կազմում, առանց մազաշափ անգամ կասկածելու, որ այդ ամուսնությունը սկիզբ էր դնելու նրա տառապալից ու աղետավոր կյանքին…

Ամուսնության առաջին ամիսները իզմիրի գեղատեսիլ ծովախորշում անցկացնելուց հետո, Պեղիրճյան ամուսինները վերադառնում են մայրագաղաք։

VI

Ե. Պոլսում հայկական բեմադրությունները դադարել էին: Մի քանի գերասաններ չանքեր էին դործ դնում մի նոր թատերախոսմբ կազմելու ուղղությամբ: Արուայակ Փափազյանը մեծ խանդավառությամբ ծրագրեր է կազմում՝ այդ խմբում իր արժանի տեղը գրավելու համար: Բայց ահա սկսվում է անսպասելին: Սովոր Պեղիրձյանը, լինելով հանդերձ գեղարվեստի սիրահար մարդ, խանդի ու հասարակական նախապաշարմումների ուժեղ ազդեցության տակ արգելում է կնոջը բեմ բարձրանալ:

Սկսվում են գժառությունները այս հողի վրա:

Ամուսնու նկատմամբ տածած անսահման սերը հնարավորություն չի տալիս Արուայակ Փափազյանին՝ միանգամից մերժելու նրա առաջարկները և շարունակելու բեմական կյանքը: Նա միաժամանակ հնոու է մնում թատրոնից: Նրա ընկերների թախանձանքները՝ թե՛ իրեն և թե՛ ամուսնուն, անցնում են ապարդյուն: Մի ամբողջ թատերաշրջան Արուայակին մենք չենք հանդիպում բեմում: Նա, տանը նստած, ողբում է իր նոր ճակատագիրը:

1865 թվականին Կ. Պոլիս գաստրոլների է գալիս իտալացի հոչակավոր արտիստուհի Ռիստորին, որը կատարում է մի շարք կարևոր դերեր:

Նրան այցելում են Հայ թատրոնի բոլոր ականավոր արտիստները, այդ թվում Սոփոն և Արուայակ Պեղիրճյան ամուսինները:

Մամուլում տպագրվում են կենսագրական տվյալներ Ռիստորիի մասին, դրում են, որ նրա ամուսինը շատ հարուստ մի կոմս է, որ նյութական որևէ ակնկալություն չունենալով հանդերձ, հանուն արվեստի համաձայնվել է, որպեսզի կինը նվիրվի թատերական ասպարեզին: Այդ օրինակով ցանկանում են զուգահեռ անցկացնել Ռիստորիի ամուսնու և Սոփոն Պեղիրճյանի միջև, համոզելով վերջինիս, որ թույլ տա Արուայակին՝ գեթ մի քանի անգամ մասնակցելու հայկական ներկայացումներին, փորձելու իր ուժերը հենց այն պիեսներում, որոնցով հոշակվում էր Ռիստորին նվրոպայում:

Արուայակ Փափազյանի բեմական ասպարեզից հեռանալուց հետո թատերախմբի ռեժիսյորը ամեն կերպ ձգուում էր բեմական որոշ տվյալներ ունեցող օր. Եպրոս Կյոմրուկճյանին աճեցնել, որպեսզի այն փոխարինի Արուայակին: Դրամատուրգ Ս. Թղթյանը և ուրիշները մամուլում ներբռողներ էին շոայլում նրան, համեմատում Արուայակի հետ, կարծեք, ի հեճուկս Սոփոն Պեղիրճյանի, նույնիսկ զրում, թե Եպրոսը գերազանցում է Արուայակին: Իրականում այդպես չէր: Եպրոսը լինելով հանդերձ շնորհալի դերասանուհի, չէր

գերազանցում՝ Արուսյակին։ Հասարակությունը, հայտարարությունների մեջ Արուսյակի փոխարեն տեսնելով Եպրոսի անունը, խուսափում էր թատրոն դնալուց, հաճախ տոմսերը հետ էր վերադառնում։

Եթե հասարակության այս բացահայտ ցուցը շոյում էր Արուսյակի ինքնասիրությունը, ապա մամուկում կատարված համեմատությունները, որոնք երբեմն դրվում էին ցինիկ արհամարհանքով, խոցում էին զդայուն արտիստունու սիրու, մի տեսակ ներքին պահանջ դարձնում նորից բնմ դուրս դալն ու մրցելը Եպրոսի և ուրիշների հետ։

Այսպիսի պայմաններում է, որ բեմադրվում է «Մոնթոնի» պիեսը։ Աֆիշաներում հայտարարվում է որպես գլխավոր գերակատար օր. Եպրոսի անունը։ Չնայած աֆիշաներին և մամուկում լույս տեսած հայտարարություններին, մինչև ներկայացման օրը աննշան քանակությամբ տոմսեր են վաճառվում։ Ներկայացումն սկսվելուց ընդամենը մի քանի ժամ առաջ Սովոր Պեղիրճյանը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Արուսյակը մասնակցի «Մոնթոնի» ներկայացմանը։ Խսկույն աֆիշաների վրայից չնշվում է օր. Եպրոսի անունը և մեծ տառերով գրվում «Արուսյակ Պեղիրճյան»։ Լուրջ արագ տարածվում է թատերասեր հասարակության մեջ, որը շտապում է դեպի թատրոն,

տեսնելու համար սիրելի արտիստունուն հայ բնեմում:

Եսի լեցուն թատրոնը ցնծագին օվացիաներով է ընդունում Արուայակի խաղը:

«Մոնթոնի» ներկայացման անմիջական տպավորության տակ, մի խումբ հայ երիտասարդներ հաջորդ օրը մի նամակ են ուղղում «Մասսիս» թերթի խմբագրությանը, որի մեջ ողջունում ան Սովոն Պեղիրճյանի ազատամիտ քայլը, նրան համեմատում Ռիստորիի ամուսնու հետ, շոյում Պեղիրճյանի արվեստագետի ինքնասիրությունը և հույս հայտնում, որ նա հայ թատրոնը այլևս չի դրկի իր արտիստունուց:

Այդ ուշագրավ փաստաթղթից մեջ ենք լերում մի քանի տող, որը բնորոշ է էպոխայի մտայնության համար և միաժամանակ ցույց է տալիս, թե Արուայակ Փափազյանի նկատմամբ հիացմունքը որքան ընդհանուր է եղել:

«Շաբաթ իրիկուն» «Մոնթոնիի» ներկայացումը արդարե հաղթանակ մըն էր ազգային թատրոնին: Տիկին Արուայակին այն իրիկուն յանապարհաստից տեսարանի վրա ներկայանալը իրեն և յուր մեծարկո ամուսնուն ազգասիրությանը ապացույց մըն էր ժողովրդյան առջև: Կարծես թե այդ իրիկուն թատրոնը այն անմոռաց դերասանուհիուն կերպարանք առած՝ կելքեր շնորհակալ ըլ-

լալու իր եռանդահույզ հասարակությանը՝ զինքը այսպես խրախուսելուն համար: Հասարակությունն ալ իր կողմէն երախտագետ ծափահարությամբը ընդունեց իր առաջին դերասանուհին, որ ատեն մը մեր թատրոնին հոգին էր: Այս ընդհանուր ուրախության մեջ հայտնի տեսնվեցավ թե Արուսյակին յուր սիրելի հասարակության սրտին վրա ձգած հիշատակները անմոռաց մնացած են և թե ինքը կպակսի մեր ազգային առաջադիմությանը»^{1:}

Ապա, անդրադառնալով Արուսյակ Փափաղյանի մի շաբթ դերակատարումներին, բարձր գնահատելով մասնավորապես նրա խորապես տպավորիչ խաղը Մոլիերի «Ագահում», Թ. Թերզյանի «Սանդուխտ» ողբերգությունում և «Իլտեկոնտա» պիեսում, նամակի հեղինակ երիտասարդները գրում են.

«Այն թոշնիկը, որ սորված է տիեզերաց ընդդարձակության մեջ զվարթ դալլալիկով ազատ թոփշք առնուլ, որքա՞ն անգիտություն է զինքը բանտարկելը և համբցնելը, այնպես ալ պատկերահանի մը ձեռքին վրձինը հափշտակելը, մատենագրի մը ձեռքին գրիչը կորզելը, դերասանի մը կամ դերասանուհի մը տեսարանի մը վրա ելնելը պղիլելն»^{2:}

¹ «Մասիս», 1865, հունվարի 30:

² Նուն տեղում:

Վերսհիշյալ տողերով՝ նամակի հեղինակները
անշուշտ իրենց դժգոհությունն էին հայտնում այն
մարդուն, որը ցանկանում էր ոզվարթ թոշնիկին»
ուահել վանդակում:

«Տիկին Արուսյակին մեծարդո ամուսինը, —
զրում են նրանք, — աղատամիտ, ուսումնական,
աղդասեր և մանավանդ արհեստագետ երիտա-
սարդ մը գոլով, և եռանդուն սրտով կփափաքի
աղգերնուս մեջ թատրոնին առաջադիմության...
ուստի ի՞նչպես կրնա պ. Ս. Պեղիրճյան այն-
քան աղատամտությամբ և աղդասիրությունը
պրկել աղդային թատրոնը այնպիսի անձե մը,
որ անհրաժեշտ է անոր առաջադիմության հա-
մար»¹:

Թատերասեր երիտասարդների այս նամակը
աննշան արդյունք է միայն տալիս: Սովոր Պե-
ղիրճյանը համաձայնվում է, որ Արուսյակը մի-
քանի ներկայացման մասնակցի, որից հետո վերջ-
նականապես արդելում է նրան բեմ դուրս գալ:

Արուսյակին փոխարինող գտնելու հարցը
դառնում է թատերախմբերի զեկավարներին հու-
զող հիմնական հարցը: Օրիորդ եպրոս Կեոմրուկ-
ճյանի անհաջողությունից հետո անիմաստ է դառ-
նում նորից նրան ասպարեզ բերելը: Այդ օրերին

¹ «Մասիս», 1865, հունվարի 30:

է, որ արդեն սրպես ոեժիսյոր աշքի ընկնող Հ. Վարդովլյանը ծանոթանում է, մի այլ աղջկա՝ Երանու՞ի Գարագաշյանի հետ, որն իր բնմական տվյալներով մեծ ապագա էր խոստանում։ Վարդովլյանը համոզում է նրան ու կապում թատրոնի հետ։

1865 թվականի դեկտեմբերի շորսին բեմադրովում է Ս. Հեքիմյանի «Հարմակ և Աշխեն» պիեսը, որտեղ Աշխենի դերում առաջին անգամ հանդիս է զալիս Երանու՞ի Գարագաշյանը։ Ներկայացումը դիտում է նաև Արուսյակը։ Օրիորդ ծպրոսի հետ մրցելիս իր հակառակորդին անտարբերությամբ նայող Արուսյակը, տեսնելով Գարագաշյանի փայլուն խաղը, հանձին նրա՝ լուրջ մրցորդ է նկատում։ Նա իր այդ տպավորությունը հաջորդ օրը արձանագրված է տեսնում մամուլում։ «Մասիս» թիրթը «Հարմակ և Աշխեն» պիեսի բեմադրությանը նվիրված ուցենացիայում կանգ է առնում Երանու՞ի Գարագաշյանի խաղի վրա և այն զնահատում է շատ բարձր։

«Աշխենի դժվարին գերը, — դրում է թիրթը, — մեծ հաջողությամբ ներկայացուց օրիորդ Երանու՞ի Գարագաշյանը։ Հաջողություն մը, որ առաջին անգամ տեսարան ելնող դերասանունվո մը համար մեծ հառաջադիմություն կխոստանա»^{1:}

¹ «Մասիս», 1865, դեկտ. 11:



Երանուհի Գարսդաշյան



Այս դնահատականը տարրեր էր օրիորդ Եպոսի մասին նույն թերթում տպված գնահատականից: Մինչդեռ նախորդը՝ Եպրոսի մասին դրվածը չէր համոզում հասարակությանը, երանուհուն տրված գնահատականը բաժանում էին բոլորը, բաժանում էր և Արուսյակ Փափաղյանը:

Այնուհետեւ, միառժամանակ, թատերական հայութարարությունների մեջ մենք կարդում ենք օրիորդ երանուհի Գարագաշյանի անունը, որպես զլիավոր դերակատար այն դերերի, որոնք առաջ կատարում էր Արուսյակ Փափաղյանը:

Ե. Գարագաշյանը կարձ ժամանակամիջոցում այնպիսի հաջողություն է ունենում, օրեցոր կատարելագործում իր տաղանդը, որ իսկապես մոռացնել է տալիս առաջին դերասանուհուն: Այն ցնծությունները, օվացիանները, որ մի ժամանակ շուայլվում էին Արուսյակ Փափաղյանին, այժմ մատուցվում են երանուհուն:

VII

Մինչդեռ երանուհի Գարագաշյանը փայլում էր իր հաշողություններով, Արուսյակ Փափաղյանը կանգնել էր կյանքի փակուղու առաջ: Օրեցօր սաստկանում է ամուսինների վեճը: Բեմական

այն հույզերը, հոգեկան փոթորիկները, որոնց հաջող կատարումով Արուսյակը բեմից ցնցում էր հազարավոր հանդիսատեսների, այժմ՝ դառնում են իրական զգացումներ և փոխադրվում նրա ընտանիքը, զգացուն արտիստուհուն պատճառելով հոգեկան ծանր հարությաներ:

Ա. Փափազյանի առաջ ուրվագծվում է երկու հանապարհ՝ ամուսնուց բաժանվել կամ դիմել անձնասպանության: Արդեն երկու երեխաների մայր լինելու հանդամանքը կասեցնում է նրան անձնասպանության մտքից, բայց ավելի ու ավելի մղում դեպի ամուսնալուծումը, ապահարզանը, որպեսզի շկտրվի բեմից:

1866 թվականի վերջերին դերասան Հ. Աճեմյանի հետ միասին Արուսյակ Փափազյանը Պերայում կազմակերպում է մի թատերախումբ, գերադանցապես «Արևելյան թատրոնի» ուժերից: Նա ցանկանում է վերակենդանացնել մի հնդամյակ առաջ սկսված և մեծ հաջողությամբ պսակված թատերական դործը, որի մեջ իշխող դեր էր կատարում ինքը:

Ինչպես ասվեց, նախորդ թատերաշրջանում նրա նպատակն էր խաղալ այն բոլոր դերերը, որոնցով հոչակելի էր Ռիստորին: Ընտանեկան և հասարակական որոշ հանգամանքներ խանգարել էին նրա ծրագրի իրագործմանը և մի երկու ներ-

կայացման մասնակցելուց հետո ընդհատել այն։ Այժմ՝ իր հիմնադրած խմբում Փափազյանը նորից է ցանկանում հանդես գալ Ռիստորիի ռեսլեռտուարով։

Նախ քեմադրում է «Հուղիտը», որի դիմավոր կերը կատարում է ինքը։

Երանուհի Գարագաշյանի քեմական ասպարեղ մանելոց հետո առաջին անգամն էր, որ Արուսյակ Փափազյանը բարձրանում էր քեմ։ Եթե գերազանցապես շահադիտական նպատակներ հետապնդող որոշ թատերական և Հասարակական դործիչներ ցանկանում էին մոռանալ Արուսյակին, ապա նրան չէին մոռացել հայ թատրոնի զարգացման բախտավիսկապես շահագրգուված պրոգրեսիվ այն մտածողները, որոնք հայ քեմի զարգացման արշալույսին, այսինքն ընդամենը մի հնդամյակ առաջ բուռն կերպով ծափահարել էին արևմտահայ առաջին դերասանուն։ Այդ մարդիկ քաջալերում են Փափազյանին, խոստանում օժանդակել նրան, որպեսզի նա շարունակի սկսած դործը։ Դրան նպաստում է «Հուղիտ» պիեսի հաջողությունը։

Հասարակության շերտ վերաբերմունքը քաջալերում է Արուսյակ Փափազյանին, որը այդ թատերաշրջանում տալիս է մի քանի ներկայացումներ։

Բնտանեկան դժառովյաններն ու անախորժովյունները շվերջացած, սկսվում են հասարակական բախումներն ու ինտրիգները։ Արուայակ Փափաղյանի հակառակորդները դիմում են ամենանենդ միջոցների, որպեսզի վարկարեկեն նրան։

Այնուհետև նրա կյանքը ընթանում է կրկնակի, և ուսկի ճակատով մղվող պայքարում։ Պայքար՝ օտարացած ամուսնու՝ Սոփոն Պեղիբձյանի հետ, երկու երեխաների կյանքի ապահովության հղատիաբակության համար, պայքար հասարակական կյանքում՝ հակառակորդ թատերախմբերի հետ։

Բատ էության այս պայքարը ստանում էր հասարակական նշանակություն։ Արուայակ Փափաղյանը և նրա շուրջ համախմբված մարդիկ, այդ մվում Հ. Աճեմյանը, Ս. Հեքիմյանը և «Մեղվի» խմբադիր Հ. Սվաճյանը պայքարում էին հայ ազգային խատրոնի վերականգնման համար, իսկ նրանց հակառակորդները, «Արևելյան թատրոնի» ուժերը ջլատել փորձելով, ցանկանում էին ստեղծել փոքր խմբեր և պատահական ուսպերտուարով անկանոն ներկայացումներ տալ հայերն և թյուրքերն ընդուներով։

«Արևելյան թատրոնի» գործունեության այդ դժվարին շրջանում, նրա վերականգնման աշխա-

տանքին ակտիվորեն միջամտում է Հ. Սվաճյանը, որը, ինչպես ասացինք, հանդիսացել է Արուայակ Փափառյանի բնմական շանթերը բազալերողներից մեկը:

Սվաճյանը 1866—67 թթ. թատերաշրջանի սկզբներից նյութական մեծ զոհողություններ կրելով, օգնում է Ա. Հերիմյանին, որպեսզի վերջինս նորից իր շուրջը համախմբի «Արևելյան թատրոնի» դերասան-դերասանութիներին, մասնավորապես Արուայակ և Աղավնի Փափառյան գույրերին, Ատ. Էրշյանին, Հ. Աճեմյանին, Պ. Մազարյանին և ուրիշների, կազմակերպի կանոնավոր ներկայացումներ:

Հերիմյանը խանդավառությամբ լծվում է աշխատանքի: «Արևելյան թատրոնի» խումբը նոր շրջանի իր գործունեությունն սկսում է 1866 թվականի վերջերին՝ նկատելի հաջողությամբ: Դարձյալ մամուլում լույս են տեսնում «Արևելյան թատրոն», վարչություն Ա. Հերիմյանի» վերտառությունը կրող հայտարարությունները, որոնք, ինչպես 1861—62—63 թատերաշրջաններում, այժմ էլ պարբերաբար ծանուցում են տրվող ներկայացումները:

Արուայակ Փափառյանը նորից իր բախտը կապում է նորաստեղծ «Արևելյան թատրոնի» հետ:

Խմբի գործունեության վրա որոշակիորեն նկատելի է Հ. Սվաճյանի ընդհանուր ղեկավարությունը։ Նախ ուսպերտուարում գերազանցապես տեղ է տրվում ինքնուրույն դրամատուրգիային։ Թարգմանականից էլ՝ առավել ուշադրություն է դարձվում կլասիկ դրամատուրգիային (Մոլիեր, Կալդերոն և ուրիշներ)։

Հակադրվելով պատմական ողբերդությունների տրադիցիոն շարլոնին, որի բնորոշ կողմն էր պատմական անցյալում տեսնել միայն իշխաններ և թագավորներ, Հ. Սվաճյանը գրում է պատմական մի ողբերգություն «Առանձնար Ամատունի» վերնագրով, որտեղ, նա, բարձրացնում է սոցիալական հարցեր, բեմ դուրս բերելով ոչ միայն իշխողներին, այլև աշխատավորներին։

«Առանձնար Ամատունի»-ն բնմադրվում է 1867 թվականի հունվարի 14-ին, որը, ինչպես վկայում է մամուլը, «խոր տապավորություն կգործի ունկնդիրներուն վրա»։ Անգամ պահպանողական «Ժամանակը» հարկադրված արձանագրում է, որ «իր տեսակին մեջ առաջին անգամ է, որ կերևս այսպիսի թատերգություն մի՝ հայ հեղինակությանց թատերաբեմին վրա»։

Այդ հաջողության գաղտնիքը եղել է այն, որ Սվաճյանի պիեսի նյութը վերցված էր պատմական անցյալի ընտանեկան, կենցաղային բարքերից,

«Հին հայ ընտանեկան կյանք» և պարունակում էր «Հետաքրքրաշարժ տեսարաններ, հուզմունք տվող պատկերներ»:

Սվաճյանի պիեսի դտած բացառիկ մեծ ընդունելությունը միայն նյութի ընտրությամբ չպետք է բացատրել, այլև՝ գեղարվեստական արժանիքներով, այն բանով, որ այդ բոլորը տրված է եղել «զմայլելի բացատրություններով»:

«Արևելյան թատրոնի» այս նոր շրջանի առաջին ամիսների գործունեությունը զուգադիպում էր Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձին: Թատերախմբի հետ այնքան մոտիկից կապված Հ. Սվաճյանը, հասկանալի է, որ շէր կարող անտեսել այդպիսի մի շատ կարենոր տարեդարձ և այն շօդտագործել քաղաքական պայքարի համար: «Առանձնար Ամատունի» պիեսի բեմադրությունից անմիջապես հետո, «Արևելյան թատրոնի» խումբը, Հ. Սվաճյանի ջանքերով, ձեռնարկում է Ռ. Անտեֆնյանի «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» պիեսի բեմադրությանը, նվիրված Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձին:

Այդ տարիներին Վարդան Մամիկոնյանի հայրենասիրական կերպարը պրոգրեսիվ ինտելիգենցիան օդտագործում էր ռեռլյուսիոն գաղափարների տարածման համար: Պատահական շպետը է համարել, որ «փրկիչ հայրենյաց» արտահայտու-

թյունը արվում էր բացառապես Վարդան Մամիկոնյանին և Մ. Նալբանդյանին: «Փրկիչ Հայրենյաց» էին համարում Նալբանդյանին եւ Պոլտում, այդ նույն մակագրությունն ենք մենք դանում Նալբանդյանի արգելված այն լուսանկարների վրա, որ հայտնաբերել էր ցարական սատիկանությունը Թիֆլիսում: Նալբանդյանին «Փրկիչ Հայրենյաց» էր համարում Հնդկաստանում հրատարակվող «Եղբայրասերը» և այլն:

Մեակցիոն հոսանքը շատ լավ էր հասկանում, որ պրոգրեսիվ ինտելիգենցիան Վարդան Մամիկոնյանի կերպարը բացառապես օգտագործում էր բաղաքական նպատակներով և հանձին Մ. Նալբանդյանի՝ ցանկանում էր տեսնել նոր ժամանակաների Վարդանին, «Հայրենյաց փրկիչին»: Այսպես, Տերոյենցը հայոց եկեղեցու զոգմաներին, սրբերին, կրոնական տոներին ջերմորեն հավատարիմ այդ խավարամոլը, միայն մի տոնից էր սարսափում՝ Վարդան Մամիկոնյանին նվիրված տոնից: Նու հանդիմանում էր Հ. Սվաճյանին այն բանի համար, որ Վարդանանց տոնին «Մեղուն» տալիս էր աշխարհիկ բովանդակություն, այն կատում էր հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի հետ: Տերոյենցը ուղղակի գրում էր. «Սրբոց տոնը կատարելը երկու նպատակ ունի. մեկը անոնց բարեխոսությանը առավինիլ, և երկրորդը՝

անոնց նմանող ըլլալ: ...Հիմա Վարդանանց սուրբ հաջատակաց նմանելու ինչ մասնավոր առիթ ունինք»:

Ուրեմն, Վարդան Մամիկոնյանի կերպարի ցուցադրումով Հ. Սվաճյանը և «Արևելյան թատրոնի» ղեկավարները նպատակ ունեին որպես «Փրկիչ Հայրենյաց» ներկայացնել Մ. Նալբանդյանին:

Բացի «Վարդան Մամիկոնյան», փրկիչ Հայրենյաց» պիեսից, Նալբանդյանի մահվան առաջին տարելիցին նվիրված այդ երեկոյին հատուկ ղեկուցում է արվում Մ. Նալբանդյանի կյանքի և ռեվլյուցիոն գործունեության մասին: Երանուճի Գարագաշյանի կրտսեր քույրը՝ օր. Վերդինե Գարագաշյանը, այդ օրը առաջին անգամ բարձրանալով բեմ, արտասանում է Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը:

Երեկոն այնքան մեծ աղմուկ է բարձրացնում պրոգրեսիվ գաղափարներով տոգորված հայ երիտասարդության մեջ, որ այն նույնությամբ կրկընվում է երկրորդ և երրորդ անգամ: Տպագրվում է Հանդիսատեսներին բաժանվում է Մ. Նալբանդյանի մեծադիր նկարը «Ազատություն» բանաստեղծության հետ միասին:

«Արևելյան թատրոնը» իր ամբողջ գործունեության ընթացքում թատերական բեմը այնքան

որհշակիորեն չէր ծառայեցրել քաղաքական նպատակների, որքան Նալբանդյանին նվիրված վերոհիշյալ երեք երեկոների ընթացքում, երբ թատերական ներկայացման արտաքին քողի տակ ըստ էության կազմակերպվում էր քաղաքական ցույց՝ բոնակալական կարգերի դեմ:

Պատմական այդ ներկայացումը գուցե շորորդ, Հինդերորդ անդամ էլ կրկնվեր, քաղաքական ցույցը ավելի մեծ ծավալ ընդուներ, եթե սութանական կառավարությունը, անշուշտ հայ էֆենդիների մատնությամբ, շմիջամտեր գործին: Կառավարությունը ապրիլի 11-ի ներկայացումից հետո վերջնականապես փակում է «Արևելյան թատրոնը», որի առաջին ներկայացմանը փայլ ու հանդիսավորություն էր տվել Արուսյակ Փափակյանը, ցրում է այնքան դժվարությամբ կազմված թատերախումբը, իսկ թատրոնի շենքը հանձնում մի ֆրանսիական խմբի:

Այսպես վերջ է դանում այն օգտակար աշխատանքը, որով այնքան խանդավառվել էին հայ առաջավոր մտածողները և նրա ականավոր ներկայացուցիչ Միք. Նալբանդյանը:

VIII

«Արևելյան թատրոն» փակվելուց հետո որոշ աշխատավորություն են հանդես բերում այդ թատրոնի

բեկորների վրա ստեղծված փոքրիկ թատերախմբ-
բերը, որոնցից էր Արուսյակ Փափազյանի և
Հ. Աճեմյանի ջանքերով կազմակերպված «Նորա-
կաղմ՝ ընկերությունը»:

«Արևելյան թատրոնի» հիմնական ուժերից
մի քանիսը, այդ թվում Արուսյակ Փափազյանը,
1867 թ. ամռան ամիսներին Սկյուտար թաղամասի
Աղիզին թատրոնում կազմակերպում են հայերեն
ներկայացումներ՝ նախորդ տարիների ոեպեր-
տուարով: Այդ ներկայացումները շարունակվում
են նուև աշնան ամիսներին: Նույն թվականի սեպ-
տեմբերի 3-ին խումբը բեմադրում է «Ավագա-
կապետը» ի նպաստ Արուսյակ Փափազյանի:

Սակայն Արուսյակի ջանքերով կազմակերպ-
ված այս թատերախմբը իր գոյությունը երկար
չի շարունակում: Գուցե հնար լիներ այդ խումբը
դարձնել մի նոր ազգային թատրոնի կորիզը, եթե
սուլթանական կառավարությունը չդիմեր խորա-
մանկ մի միջոցի և շփորձեր հայ թատրոնի գար-
դացման դործը խլել պրոգրեսիվ գաղափարներով
տոգորված մարդկանց, մասնավորապես «Մեղվիճ
շուրջ համախմբված ինտելիգենցիայի ձեռքից և
այն հանձնել ազգային թատրոնի զարգացումը
իրենց անձնական շահին ստորադասող մարդ-
կանց:

Սուլթանական կառավարությունը այդպիսի մարդ է համարում «Արևելյան թատրոնի» դերասաններից Հակոբ Վարդովյանին, որը աշքի էր ընկնում ոչ միայն որպես լավ դերասան, այլև որպես ոճժիսյոր, և ուներ կազմակերպչական մեծ ընդունակություններ:

Հ. Վարդովյանին շնորհվում է օսմանյան պետական թատրոնի 10 տարվա մենաշնորհ: Նրա տրամադրության տակ են դրվում նյութական խոշոր միջոցներ:

Հ. Վարդովյանը իր շուրջն է համախմբում վերջին տասնամյակում աճած հայ բեմական լավագույն կադրերին, նրանց բաժանելով կատեգորիաների, նշանակում է ոռնիկ: Նա իր թատերախմբի հետ է կապում նաև խաղացի ոճժիսյորների, կոմպոզիտորների: Զերք է բերում հարուստ դեկորացիաներ, բեմական զգեստներ:

Այսպիսի պայմաններում է, որ 1867—68 թթ. թատերաշրջանից սկսում է գործել Հ. Վարդովյանի 60 հոգուց բաղկացած թատերախումբը, որը կոչվում էր «Օսմանյան թատրոն» (Թատրոն Օսմանի): Վարդովյանի թատրոնը կանոնավոր գործում է ուղիղ մի տասնամյակ՝ մինչև 1877—78 թթ. ոռւս-թյուրքական պատերազմի տարիները: Այդ մեկ տասնամյակի ընթացքում խոսմբը տվել է հարյուրից ավելի բեմադրություն, որոնք կրկնվել

Են մի քանի հարյուր անգամ։ Ինչ խոսք, որ նման մի թատերախմբի տասնամյա աշխատանքները կապվում են հայ թատրոնի պատմության հետ, կազմում նրա գործունեության օդակներից մեկը և արժանի են հատուկ ուսումնասիրության։

Մեր նպատակից դուքս է Վարդովյանի թատերախմբի պատմությունն անելը, սակայն չենք կարող շտալ նրա քաղաքական բնութագիրը, առանց որի անհասկանալի կարող է մնալ, թե ինչու ժամանակի պրոգրեսիվ դրամատուրգիները, դերասանները ու կոմպոզիտորները հեռու են միացել Վարդովյանի խմբից, ինչու այդ թատերական գործիշները շարունակ պայքարի մեջ են եղել Վարդովյանի հետ¹։

Վարդովյանի այդ թատերախմբի գործունեությունը պետք է դիտել որպես 1861—62 թվական-

¹ Բացառություն կարող է կազմել չ. Պարոնյանը, որը Վարդովյանին հաճախում է առել իր ողաշտանության տակ։ Դա հատուկ ուսումնասիրության հարց է, կազմած չ. Պարոնյանի «Թատրոն» պարերականի արտօնություն ստանալու գործում Վարդովյանի ցույց տված օժանդակության հետ։ Հակոբ Պարոնյանը, սակայն, գաղափարական զիջում չի կատարել և քննադատել է Վարդովյանի թարգմանական խորթ ունակերտուարը, նրան համարել է շահամոլ մի մարդ, որը «կեղծափորություն ընելու մասերուն մեջ երեկի հանդիսացավ» (չ. Պարոնյան, Երկեր, հատոր 3, էջ 232)։

ներին սկսված գործի շարունակությունը, թե՝ դա
ուղղված էր հենց «Արևելյան թատրոնի» տրադի-
ցիաների դեմ:

Նրա խմբի տասնամյա ռեպերտուարը աշքի
անցկացնողը հեշտությամբ կարող է նկատել, որ
այդ թատրոնը հետապնդել է որոշակի քաղաքա-
կան նպատակ՝ աստիճանաբար ռեպերտուարից
հանել ինքնուրույն պատմական և կենցաղային
դրամատուրգիան, դրա փոխարեն լայն տեղ տալ
արևմտաեվրոպական մելոդրամաներին։ Խումբը
հաճախ ամբողջ թատերաշրջաններ հատկացրել է
այդպիսի ռեպերտուարի, օրինակ՝ շաբաթներով՝
սերիաներով, բեմադրելով «Մոնթե Քրիստոն»,
«Թափառական հրեան» և այլն։

Մյուս կողմից Վարդովյանը սկսում է աստի-
ճանաբար իր ներկայացումները տալ թյուրքերին
լիզվով, բեմադրելով թյուրք հեղինակների պիես-
ները։

Ունենալով նյութական խոշոր հնարավորու-
թյուններ, շխնայելով որևէ ճիգ ու ջանք բնիմա-
դրությունների հաջող կազմակերպման, ինչպես
նաև երաժշտական ձևավորման համար, Վարդովյ-
յանը հանդիսատեսների մեծ թիվ է պրավել իր կող-
մը, նկատելի շափով վնասելով ազգային ներկա-
յացումներ կազմակերպող թատերախմբերին,
որոնք շղիմանալով Վարդովյանի մրցմանը, դիջում

էին, մարում, բայց նորից փորձում հրապարակ դալ:

Պատահական չպետք է համարել, որ Արուսյակ Փափազյանը, Ստ. էթշյանը, Պ. Աղամյանը և ուրիշներ չեն մասնակցել Վարդովյանի խմբի ներկայացումներին:

* * *

Արուսյակ Փափազյանի գործունեությունը սերտորեն կապված է ազգային թատրոնի զարդացման համար մղվող պայքարի հետ:

Մենք արդեն տեսանք, որ նա նման մի փորձ կատարեց «Արևելյան թատրոնի» գործունեության առաջին խափանումից հետո, 1866 թվականին Հ. Աճեմյանի աջակցությամբ հիմնելով «Նորակազմ ընկերությունը»:

Սակայն այդ ընկերությունը նկատելի չաչողություն չէր կարողացել ունենալ: Նրա հետ մրցում էին առավել ուժեղ խմբեր, որոնցից մեկի զեկավարն էր Վարդովյանը: Ավելին՝ եթե 1861—62 թվականներին իր փառքի ամենափայլուն շրջանում Արուսյակը ուներ ընդամենը մեկ կամ երկու մրցորդ և որպես անդրանիկ դերասանուհի վայելում էր ընդհանուր հիացմունք, գրեթե իշխում էր

Հայ թեմի վրա, 1860-ական թվականների կեսերից արևմտահայ թեմը ունեցավ մոտ տասը դերասանունի, որոնց մի մասը, ճիշտ է, իր տաղանդով զիջում էր Արուայակ Փափազյանին, սակայն մի քանիսը ունեին արվեստագետի նկատելի արժանիքներ և արդեն առաջին ելույթներից իրենց վրա էին թեռում Հասարակության ուշադրությունը։ Դրանցից էին Երանու՞ի Գարագաշյանը, Աղնիկ Հրաշյան և ուրիշներ։

Երանու՞ի Գարագաշյանն ուներ այնպիսի տվյալներ, որոնք թատերական արվեստի զարդացման առաջին տարիներին կարող էին աղջել Հանդիսատեսի վրա և դրավել նրա ուշադրությունը։ Համարձակ, կենսուրախ, ճկուն այդ աղջիկը կարճ ժամանակում կարողացել էր յուրացնել ֆրանսիական և իտալական դերասանական խըմբերի խաղի արտաքին կողմը՝ հրապուրիչ ժեստիկուլյացիա, խոսուն միմիկա, գեղեցիկ շարժումներ, այն էլ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ, ինչպես Հ. Պարոնյանն է ասում, Հանդիսատեսները շատ հաճախ ծափահարում էին ոչ թե այիսի արժանիքների կամ գերակատարների հաջող խաղի, այլ գերասանու՞իների գեղեցիկ աշքերի և սրունքների համար։

Արուայակ Փափազյանի և Երանու՞ի Գարագաշյանի բնմական բախումը հասարակության համար նկատելի է դառնում 1868 թվականի փետրվարի սկզբին, «Սանդուխտ» պիեսի բնմագրության ընթացքում։ Նախընթաց ամբողջ ժամանակաշրջանում Բ. Թիրզյանի այդ պիեսի գլխավոր դերի կատարումով հանդես էր եկել Արուայակը։ Բ.վում էր, թե զժվար էր պատկերացնել մի այլ գերասանու՞ի, որն այն կատարեր նույնպիսի հաջողությամբ, ինչպես Ա. Փափազյանը։ Եվ ահա, Սանդուխտի դերը հանձնվում է Երանու՞ի Գարագաշյանին, որը այն կատարում է ոչ նվազ հաջողությամբ, քան Արուայակը, ծափահարվում է, ոչ նվազ օվացիաների արժանանում, քան Արուայակը։

IX

Վարդովյանի խմբի դեմ միշտ էլ մրցման են դուրս եկել «Արևելյան թատրոնի» տրագիֆիաները վառ պահելու, աղջային թատրոնը զարգացնելու կողմնակից մի շարք դերասան-դերասանու՞իներ, մասնավորապես Ա. Փափազյանը, Պ. Մաղաքյանը, Ա. Էրշյանը, Հ. Աճեմյանը և շատ ուրիշներ, բայց առավել մեծ շափով նորաստեղծ հայ թատրոնի զարգացման ջատագովք հանդիսացել է Արուայակ Փափազյանը։

Նա 1869 թվականի հունվար ամսախն կազմակերպում է մի նոր խումբ և սկսում իր ներկայացները տալ Ստեփան Էքչյանի աջակցությամբ:

Խումբը առաջինը բնիմագրում է Ս. Թղթականի «Ենկթիմուր» պատմական ողբերգությունը: Մամուլում տպագրված հայտարարությանը Արուսյակ Փափազյանը կցում է իր ստորագրությամբ մի ապօք, որտեղ իմիջիալոց դրում է. «Ազգասկր սրտի մը, որ բարենախանձ աշքով կնկատե քաղաքակիրթ ազգոց մեջ թատերական հանդեսից օդուտները, քիչ ցավ չէ հիշելը թե իր ազգն ալ քանի մը տարի առաջ շքեղ սկզբնավորություն մը ըրավ և ընդհուպ հետս հետս ընկրկեցավ: Այս եռանդը վերստին ազգերնուս մեջ արծարծելու րադանքով փափակեցա վերոհիշյալ թատերգությունը ներկայացնել նառամի թատրոնին մեջ... առանց պահանջված ծախսերը խնայելու: Ուրախությամբ կիմացնեմ թե պ. Ստ. Էքչյան առաջին դերասանը, որքան ալ հրաժարած էր թատերական ասպարեզն, իմանալով որ հեղինակը լենկթիմուրի դերը իրեն համար գրած է, և թե առանց մեր երկուքին ընկերակցության շհաճիր զայն տալ, թե հեղինակին աշխատությունը ի դերեւ շհանելու և թե իմ եռանդս շվհատեցնելու համար ընդունեցավ այդ վսիմ ու դժվարին դերը»:

Արուայակ Փափազյանի ստորագրությամբ
նման մի հայտարարության հրապարակումը մա-
մուլում, այնպիսի մի ժամանակ, երբ հրապարակի
վրա դործում էր Հ. Վարդովյանի մեծ թատերա-
խումբը, նշանակալից երևույթ էր:

Այդ փաստաթուղթը ցույց է տալիս, որ ժա-
մանակի պլրոգրեսիվ ինտելիգենցիան, այդ թվում
Հ. Սվաճյանը, Ա. Հեքիմյանը, Ա. Փափազյանը,
Մտ. Էքչյանը, Պ. Մաղաքյանը և ուրիշները, հանձին
Վարդովյանի խմբի ոչ միայն չեին տեսնում հայ
ազգային թատրոնի զարգացման մի նոր աստի-
ճանը, այլ ընդհակառակը՝ տեսնում էին այդ թատ-
րոնի քայլայումը: Ա. Փափազյանի նամակի այն
տողերը, թե հայ ազգային թատրոնը իր փայլուն
ոկզրնավորությունն անելուց հետո սկսել է հա-
նահանջել, Ա. Փափազյանի բառերով ասած՝ «հետո
հետո ընկրկիլ», ուներ որոշակի հիմք և իվուր չէ,
որ այդ փաստը այնքան անհանգստություն էր
որատճառում դեմոկրատական ինտելիգենցիային:

Արուայակ Փափազյանը այդ երևույթի դեմ
որայքարելու համար է, որ ասպարեզ էր իշնում իր
հիմնադրած թատերախմբով, որը, դժբախտաբար,
չուներ Վարդովյանի խմբի ո՞չ նյութական հնարա-
վորությունները և ո՞չ էլ տեխնիկական բազան:

Չնայած դրան Արուայակը չի վճառվում և շա-
րունակում է սկսած դործը: Նույն թվականի փե-

տըրմլարի վերջերին նրա զեկավարությամբ խումբը բեմադրում է թարգմանական մի պիես՝ Ֆրանց Գրիլպարցերի «Սաֆոն»։ Այդ ներկայացման մասին մամուլում տպագրված հայտարարության կից նույնպես Արումյակ Փափազյանը տպագրում է իր ստորագրությունը կրող մի «ազգ», որից իմանում ենք, որ հասարակությունը բավականաշատ զնա-հատել է իր նախաձեռնությունը և քաջակերել նո-խորդ բեմադրությունը։

Ասկա խումբը բեմադրում է Մ. Պեշիկիթաշ-լյանի «Արշակ Բ», էոժեն Սյուի «Թափառական ճրեա» և այլ մի քանի պիեսներ։

Այս բոլոր պիեսների ներկայացումների ժա-մանակ Արումյակ Փափազյանը գերազանցապես կատարել է զլխավոր դերեր։ Դժբախտաբար այս թատերաշրջանի ներկայացումների մասին մենք մամուլում գտնում ենք աննշան ակնարկներ միայն, որոնց հիման վրա դժվար է ասել, թե Վարդովյանի խմբի հետ ունեցած իր մրցման մեջ «Արևելյան թատրոնի» այս նոր շրջանը ինչպիսի հաջողություն է ունեցել և կարողացել է դառնալ աղգային թատրոնի տրադիցիաները վառ պահող մի կենտրոն։ Մյուս կողմից՝ հայտնի չէ նույնպես, թե երկար ընդունված է ընտանեկան հոգիկան փոթորիկներից հետո նորից հանդես եկող Արում-յակ Փափազյանը ինչպես է կատարել իր դերերը

այս նոր թատերաշրջանում։ Մեզ հասել են տեղեկություններ միայն այն մասին, որ նա հաջողությամբ կերտել է անտիկ բանաստեղծութիւնի Սաֆոյի կերպարը։

Արուսյակ Փափազյանը մեծ ջանասիրությամբ որպես ոեժիսյոր քաջալերել է երիտասարդ ուժերին, ճանապարհ հարթել բնմական ասպարեզ մուտք գործել ցանկացող ազգիկների համար։

Նրա աճեցրած բնմական այդպիսի ուժերից մենք հիշատակենք միայն մեկին։ Հայ բնմի տաղանդավոր գերասանութիւն Աղնիվ Հրաշյայի բնմական ասպարեզ մտնելու և որպես արտիստութիւնավորվելու փաստը գերազանցապես կապված է Արուսյակ Փափազյանի անվան հետ։

1869 թվականի դեկտեմբեր ամսին վերոհիշյալ թատերախումբը Պ. Մաղաքյանի ղեկավարությամբ և Արուսյակ Փափազյանի ոեժիսյորությամբ բնմադրում է «Թափառական հրեա» պիեսը։

Այս ներկայացման երեկոյին է, որ Աղնիվ Հրաշյան առաջին անգամ մուտք է գործում բնմական ասպարեզ, քաջալերվելով ամենից առաջ Արուսյակ Փափազյանից։

Իր հետաքրքրական հիշողությունների մեջ Աղնիվ Հրաշյան պրում է.

«Անմիջապես երկրորդ օրը գացի «Թափառական հրեայից փորձին, Պերայի քրանսիական

թատրոնը։ Երբ ներս մտա, օդային դաղի հոտը զիս դինովցուց. ինձ կթվեր թե աշխարհիս վրա չկա այդպիսի անուշահոտ բուրմունք... այստեղ տեսա տիկին Արուսյակ Պեղիրճյանը, իր քույրը Աղավնի Վալիտեյանը և մեր տաղանդավոր դերասան Աղամյանը, որը ստանձնած էր Գարրիել քահանայի դերը։ Փորձը հաջող անցավ։ Ներկայացման իրիկունը Արուսյակ Պեղիրճյան համբուրելով ու գգվելով՝ ինքը անձամբ հապցուց ինձի ու Զապելին ու զգեստներ։ Ես վերացած էիմ¹։

Այնուհետեւ, ամբողջ երկու տարի մենք Արուսյակին այլևս բեմի վրա չենք տեսնում։ Աղդային թատրոնը վերակենդանացնելու ուղղությամբ նրան թափած բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն։ Նու քաշվում է բեմական ասպարեզից և ազրում մեկուսացած կյանքով, դարձյալ նետվում ընտանեկան հոգսերի հորձանուախի մեջ։ Բարոյական այդ հարվածին հետևում է առողջական վիճակի աստիճանաբար քայլայումը, որը կենսուրախ, միշտ լավատես այդ կնոջը զցում է մելանխոլիայի մեջ։

Այս շրջանի իր հոգեկան տառապանքները, իրեն մաշող վիշտը նա արտահայտել է մի բանաստեղծության մեջ, որը արտասանել է ի նպաստ

¹ Աղջուկ Հայոց աշխատանքները, իմ հիշողություններու, Փարբեց, 1900թ., էջ 13։

իրեն արված ներկայացումից առաջ: Այդ բանաստեղծության մեջ նա գրում է:

Քանի՛, քանի հրավեր կարդա՞մ
Թե Արուայակս զո՞՞ կերթամ.
Վախնամ մի օր զիս կու կուտան
Զի ձեր մեջ շատ անսիրտներ կան:

Ինչպես կտեսնենք ստորև, Արուայակը հիմքունեան երկյուղ ունենալու, նրա գուշակությունը կատարվում է:

* * *

Ավագ քրոջ Հետ միասին, զեռևս 1861 թվականից իր բախտը հայ բեմի Հետ կապած Աղավնի Փափազյանի կյանքի ուղին նույնպես նման է Արուայակի կյանքին: Նրա Հետ միասին 1863—64 թթ. թատերաշրջանում իզմիրում խաղալուց հետո Աղավնի Փափազյանը Արուայակից շուտ վերադառնում է Կ. Պոլս և խաղում «Արևելյան թատրոնի» խմբի գերասանների Հետ:

1865 թվականից նա կարծեք հեռանում է բեմից, մի քանի տարի մենք նրա անվան հիշատակությանը շենք հանդիպում մամուլում, 1869 թվականից, սակայն, Աղավնիին տեսնում ենք Ա. Փափազյանի և Պ. Մաղարյանի ջանքերով կազմակերպված խմբում:

Աղավնի Փափազյանը չի ունեցել ո՞չ իր ավագ

բրոջ արտիստական ձիրքը և ո՞չ էլ բեմական տըվյալները: Նա զուրկ է եղել հասարակական աշխատանքի այն ձգտութից, որ մենք տեսնում ենք Արուսյակի մոտ: Նա եղել է միջակ կարողության տեր գերասանուհի, հեռու կանգնած հասարակական-քաղաքական կյանքից, այդ է պատճառը, որ շնայած ավելի քան մի տասնամյակ խաղացել է հայ բնմում, նրա մասին իրար հակասող ցար ու ցրիվ տեղեկություններ են հասել մեզ:

Այդ ժլատ տեղեկություններից երեսմ է, որ Աղավնի Փափազյանը հաջողությամբ է կատարել մեծ մասամբ մայրական՝ գորգուրանը, քնքություն, մեղմություն պահանջող դերերը, նա երբեք իր ուժերը շի փորձել ուժեղ կրքեր արտահայտող դերերում: Նրա նախասիրած գերերից է եղել, օրինակ, Վերդինեի դերը «Պող և Վերդինե» պիեսում, որը նրա կատարմամբ մեծ գոհումակություն է պատճառել հանդիսականներին և արժանացել մամուլի խրախուսանքին:

1871 թվականին Աղավնի Փափազյանը ամուսնանում է Խաչիկ Վալիտեյյանի հետ և այնուհետև մամուլում գրվում Աղավնի Վալիտեյյան: Ամուսնակուց հետո նա շի քաշվել բեմից, բայց խաղացել է պատահական խմբերում, մեծ ընդմիջումներով, դարձյալ շմանելով Հակոբ Վարդովյանի խմբի մեջ:

X

Այն, ինչ որ շկարողացավ կատարել Արուայակ Փափազյանը, մասամբ կատարեցին այլ թատերախմբեր, որոնք նույնպես հանդես էին գալիս ազգային թատրոնի զարդացմանը նպաստող ծրադրերով:

Դրանցից հիշատակության արժանի է Սամաթիա աշխատավորական թաղամասում կազմակերպված Սահմանական ընկերության թատերախումբը, որը երկու տարի (1870—1871 և 1871—72 թատերաշրջաններ) կանոնավոր ներկայացումներ է տվել: Այս թատերախմբի գործունեության մասին հայ թատրոնի պատմությանը նվիրված դրականության մեջ և ոչ մի տող չկա, մինչդեռ այն արժանի է ուշադրության:

Սամաթիայի Սահմանական թատերախումբը միակն է հայ իրականության մեջ, որ իր ռեպերտուրում բացառապես տեղ է տվել ինքնուրույն դրամատուրգիային, անշուշտ կենցաղային դրամատուրգիայի աղքատության պատճառով՝ բեմադրելով գերազանցապես պատմական ողբերգություններ: Մամուլում տպված հայտարարություններից երեսում է, որ այդ երկու թատերաշրջաններում Սամաթիայի խումբը բեմադրել է «Ներսես», «Հայկ դյուցազն», «Լահան Մամիկոնյան», «Կոռնակ», «Արշակ Բ», «Շիրիմք երկուց սիրելլաց»,

ովարդ և շուշան» և այլ մի շարք ինքնուրույն ողիեսներ:

Միակ բացառությունը, որ կատարել է խումբը, Շիլերի «Ավազակների» բեմադրությունն է թարգմանական դրամատուրգիայից, մի ողիես, որը երբեք տեղ չի գտել Հ. Վարդովյանի խմբի տասը տարվա ուսպերտուարում:

Սակայն, ինչպես Արուսյակի խումբը, Մամայիայի թատերախումբն էլ, երկրորդ թատերաշըրջանը շրուորած, հարկադրված է լինում ընդհատել իր ներկայացումները հայտնի չէ, թե ինչ ողատձառներից դրդված:

Ճիշտ այդ օրերին նորից հայ թատրոնի երկնակամարում երևում է Արուսյակը:

1872 թվականի փետրվարի 11-ին «Արևելյան թատրոնի» ցրված դերասանները կազմակերպում են իտալացի դրամատուրգ Ալֆիերիի «Մերոպե» ովրերգության բեմադրությունը: Մերոպեի դերը կատարում է Արուսյակը, խաղընկեր ունենալով Պետրոս Ագամյանին, որ կատարել է Էճիսթոյի դերը:

Արժեքավոր մի փաստաթուղթ է այդ ներկայացման ծրագրին կցված և Արուսյակի կողմից ստորագրված «աղղոթ», որտեղ երևում է բեմական կյանքից հեռացող, քայքայված առողջության տեր դերասանուհու սրտի մորմոքը:

«Ազգային թատրոնի անդրանիկ դերասանութին ըլլալս գուցե ինձ այսքան պատիվ չէի համարեր, եթե հասարակության ջերմ համակրությունը զիս արժանիքիս ավելի պատված ըրլար։ Արդարեն հարկ էր, որ ևս ալ իմ երախտագիտությունս արդյամբ ցուցնելու համար թատերական ասպարեզն բոլորովին շմհկուսանայի և եթե ոչ միշտ և շարունակ, զեթ երբեմն տարվան մեջ իմ գեղեցիկ արվեստիս նվիրեի կենացս քանի մը օրերը։ Անձնական տկարությունս շներեց անցյալ տարի ոքրտիս փափազը գործադրել, բայց այս անգամ եռանդուն ոգվով կախորժիմ լսել բարեկամաց հրավերը և կփութամ ի բեմ։»

Այս ներկայացումից հետո մենք Արուայակ Փափազյանի անվան հիշատակությանը հազվադիպ ենք հանդիպում մամուկում։

1873 թ. վերջերին «Արևելյան թատրոնի» վերականգնման փորձ է կատարում Պետրոս Մաղաքյանը։ Նա կազմակերպում է մի թատերախումբ և ներկայացումներ տալով Օրթագյուղում, բոլորում է մի շատ հաջող թատերաշրջան։ Նրա խմբի մեջ են մտնում Պետրոս Աղամյանը, Աղնիվ Հրաչյան, Դ. Թրյանցը, Ս. Փափազյանը և ուրիշներ, մի խոսքով այն բոլոր դերասանն-դերասանուհիները, որոնք միշտ հեռու էին մնացել Վարդովյանի թա-

տերախմբից և ձգտում էին զարկ տալ ազգային թատրոնին:

Հ. Վարդովյանի խումբը իր տասնամյա դրուժուննության ընթացքում երրեք այնպիսի ուժեղ մրցորդ շեր ունեցել, ինչպես 1873—74 թթ. թատերաշրջանում, հանձին Մաղաքյանի խմբի:

Մաղաքյանը, իր ուեպերտուարը կազմելով դերականցապես ինքնուրույն պիեսներից, իսկ թարգմանական դրամատուրգիայից էլ ընտրելով հատկապես այնպիսի սիեսներ, որոնք բարձրացնում էին հասարակական նշանակությունը ունեցող հարցեր, ձգտում էր թատրոնը ժառայեցնել դաստիարակչական նպատակի, արձագանքել հայ իրականությանը հուզող հարցերին:

Ի տարբերություն Վարդովյանի խմբի, Մաղաքյանը իր ներկայացումները տալիս էր բացառապես հայերեն լեզվով, հատուկ ուշադրություն դարձնելով բնիմական լեզվի մշակմանը: Առաջին անգամն էր, որ հայ թատրոնում բնիմագրվող բոլոր պիեսները ենթարկվում էին լեզվական, ոճական խմբագրման, բնրվում էին լեզվական մի ընդհանուր հայտարարի:

Մաղաքյանի խմբում մենք չենք հանդիպում Արուսյակ Փափազյանի անվանը: Ի՞նչն է նրան հեռու պահել մի այնպիսի ձեռնարկումից, որին նա իր ամբողջ ուժն ու կարողությունն էր նվիրա-

բերել՝ հայ թատրոնից իսպառ հեռանալու որոշումը, թե առողջական վիճակը։ Մենք հավանական ենք համարում վերջին ենթադրությունը, մասնավանդ որ մենք նրան դրանից հետո էլ գեռ միաժամանակ տեսնում ենք հայ բեմում։

Կան փաստեր, որ մինչև 80-ականների սկզբները Արուսյակը մերթ ընդ մերթ մասնակցել է պատահական ներկայացումների, կատարելով իր նախասիրած դերերը։ Սակայն իր բեմական գործունեության այդ վերջին տարիներին նա չի գնահատվել ըստ արժանվույն։ Արուսյակը երբեք շխաղալով հանդերձ Հ. Վարդովյանի խմբում, հարկադրված է լինում խաղալ ուրիշ այնպիսի խըժքերում, որոնք պարզապես օգտագործում էին նրա հեղինակությունն ու բեմական հոչակը, ամենակոպիտ կերպով վիրավորելով զգայուն արտիստունու ինքնասիրությունը։

Նրա նկատմամբ տմարդի վերաբերմունք են ունեցել ոչ միայն թատրոնի մարդիկ, այլև ազգային հիմնարկություններում նստած, ժողովրդի հաշվին ապրող թաղականներն ու ազգային խորհրդի անդամները, այն մարդիկ, որոնք խարում էին ժողովրդին, թե կազմում են ազգատախնամք ընկերություններ, օգնում են թշվառ մարդկանց, բայց իրականում այդ փողերով շուայլկանք էին վարում։ Նրանք են ահա, որ մերժում

ևն օրիվա հացի կարոտ դերասանուհուն նույնիսկ ղեղատոմսի փող տալ:

Արուսյակ Փափազյանը ընկնում է նյութական ամենածանր պայմանների մեջ, զուրկ օրիվա ասրուստից:

1879 թվականի գարնանը Արուսյակի արվեստի ճշմարիտ հիացողներից մի քանիսը կաւզմում են մի մասնաժողով և որոշում են ի նպաստ թշշվառ արտիստուհու՝ բնմադրել «Մեղես» ողբերգությունը, Մեղեսյի դերը հանձնելով Արուսյակին:

Այստեղ մեջ ենք բերում Արուսյակ Փափազյանին նվիրված այդ ներկայացման հայուրարությունը ամբողջությամբ.

«Թատրոն Գաղիական

Բերա, Մեծ փողոց

1879 մայիս 24, Հինգշաբթի

Արտաքո կարգի ներկայացում ի նպաստ տիկի:

Արուսյակ Պեղիրճյանի:

Տնօրինությամբ պատվավոր մասնախումբի մը:

«ՄԵԴԵԱ»

Ողբերգություն երիս արարս

Թարգմ. թ. Թերզյանի



Արուսյակ Փափազյանը
70-ամյան լվականներին



ի պատիվ տիկ. Արուսյակ Պեղիրճյանի պիտի երգեն:

Լեզլեզիջի Հոր-Հոր (տ. է. Աճեմյան)

Սինեոլի (օր. Մ. Սիրանույշ)

Գեշ ատեն (տ. Սանճադճյան):

Արուսյակ Փափազյանին նվիրված նման ներկայացումներ տրվում են նաև դրանից հետո:

Այսպես, 1880 ապրիլ ամսին Օրթագյուղի Բարեսեր ընկերության թատրոնում բեմադրվում է Վ. Հյուգոյի «Անջելո» ողբերգությունը ի նպաստ ռազմային անդրանիկ դերասանուհով»: Մամուլում այդ մասին հրապարակված ծանուցման մեջ թատերասերների ուշադրությունն է հրավիրվում սույն տիկնոջ փայլուն անցյալի և տխուր ներկայի վրա:

1881 թվականի սկզբներին մամուլում լույս է տեսնում մի հայտարարություն, որից պարզվում է, որ Արուսյակ Փափազյանը դիմել է Տալագրական տեսչությանը և խնդրել մի հանդեսի հրատարակության թույլտվությունը: Այդպիսի արտօնությունն տրվում է Արուսյակին, սակայն պարբերականը չի հրատարակվում: Պարբերականը կոչվելու էր իր անունով՝ «Արուսյակ»: Վերոհիշյալ հայտարարությամբ Արուսյակ Փափազյանը դիմում է Արուսյակ Փափազյան — 7

իրեն հարգող հասարակությանը, որպեսզի մի ներկայացում տրվի, որի արդյունքը հատկացվի պարբերականի հրատարակությանը:

Նրա այդ ցանկությունը, այն էլ կյանքի այդ ժանր տարիներին, անշուշտ, տարօրինակ կարող է թվալ: Սիստեմատիկ որևէ կրթությունից զուրկ այդ կինը ի վիճակի չէր որևէ պարբերական հրատարակել: Ամենայն հավանականությամբ Արուսյակի անունը և հեղինակությունը օգտագործելով պարբերականի հրատարակության արտոնություն էին ցանկանում ձեռք բերել դեմոկրատական դադարիարներով տարված այն հայ զործիչները, որոնք մոտ էին կանգնած «Արևելյան թատրոնին»: Նման մի պարբերականի հրատարակությունը անհրաժեշտ էր դարձել, որովհետեւ դադարել էին դեմոկրատական ուղղության պարբերականները, այդ թվում «Մեղուն» և դրանից հետո հրատարակված «Թատրոնը», իզմիրում լույս տեսնող պրոդրեսիվ ժուռնալ «Շաղիկը»:

Ի՞նչ հետեանք է ունեցել Արուսյակի անվամբ սկսված այդ գործը, հայտնի չէ. փաստ է, որ պարբերականը լույս շի տեսել և ամենայն հավանականությամբ վերոհիշյալ ներկայացման արդյունքը հատկացվել է «խեղճ դերասանություն» կարիքներին, ինչպես որակվել է նա հայտարարության մեջ:

Մեղ Հայտնի վերջին ներկայացումը, որին մասնակցել է Արուսյակ Փափազյանը, 1883 թ. փետրվար ամսին տրված՝ Մ. Պեշիկիթաշլյանի «Երշակ» թա ողբերգությունն է, որտեղ նա կատարել է Փառանձեմի գլխավոր դերը։ Այս փաստը մամուլում չի հրապարակված, որովհետեւ ներկայացումը տրվել է նեղ, ընտանեկան շրջանակում։ Հանդիսականների թիվը Հարյուրից շի անցելու վերոհիշյալ ներկայացման մասին խոսում է դերասան Պետրոս Աղամյանի ընկերներից մեկը Կ. Պոլսից Մոսկվա՝ Աղամյանին գրած իր նամակում, որից իմանում ենք, որ Արուսյակն իր դերը կատարել է փայլուն կերպով, արժանանալով Հանդիսականների ջնրմ ծափահարություններին¹։

Դրանից հետո, մենք այլևս Արուսյակ Փափազյանին չենք տեսնում Հայ բնմում։ 1880-ական թվականների կեսերից հեռանում է թատերական ասպարեզից։ Բայց նա դրանից հետո դեռ քառորդ դար ապրում է։ Ինչո՞վ բացատրել, որ այդքան երկար ապրելով հանդերձ, նա այլևս չի փորձել րեմ բարձրանալ։

Արուսյակ Փափազյանի մասին գրող մարդիկ այդ բացատրել են բացառապես նրա առողջական

¹ Հայկական ԱՍՏ ԳԱ Դրականության հա արվեստի մանգարան, Պ. Աղամյանի արխիվ, թղթապահություն 32:

լինակով։ Ճիշտ է, որ նա այդ թվականներին գողնվում էր առողջական այնպիսի լինակում, որը անհնար էր դարձնում բեմին նվիրվելը, սակայն, մեր կարծիքով, միակ պատճառն այդ չէր և եթե այդ լիներ, մինչև 80-ական թվականների վերջերը գել մի քանի անգամ էլ նա կարող էր իր ուժերը փորձել պատահական ներկայացումներում, ինչպես այդ կատարում էր արևելահայ առաջին դերասանունի Սաթենիկ Չմշկյանը, որը գրեթե նույն ժամանակաշրջանում է բեմական ասպարեզ մտել և նույն՝ Արուայակի մահվան տարում էլ մահացել է, սակայն անգամ խոր ծերության հասակում խաղացել է։

Արուայակի Փափազյանի բեմական ասպարեզից բոլորովին հեռանալը, մեր կարծիքով, ամենից առաջ տեսք է բացատրել հասարակական-քաղաքական այն նոր պայմաններով, որ սաեղծվել էին ուսությունքական պատերազմից հետո։

Ուսությունքական պատերազմից հետո սաստիացած քաղաքական հալածանքները տարածվում են նաև հայ թատրոնի վրա։ Արգելվում են առօսասարակ հայկական ներկայացումները։ Հետապընդվում են ոչ միայն հայ աղքային թատրոնի զարդացմանը նաև ստոդ թատերախմբերը, այլ անգամ Վարդովյանի խումբը։ Իր կատարած աշխատանքների համար որպես արժանի վորխհատուցում սուլ-

թանական կառավարությունը Հ. Վարդովյանին (որն արգեն իր ժողովրդից իսպառ հեռացած դըրվում էր Գյուլլի Հակոբ) պաշտոն է տալիս սումանի պալատում, որպես պալատականների ու կանանցի համար զվարճություններ, թատերական ներկայացումներ կազմակերպող մի մարդու:

Ինչպես Վարդովյանի խմբից դուրս գտնվող զերասանները՝ Պ. Աղամյանը, Հրաչյան և ուրիշները, այնպես էլ Վարդովյանի խմբի աշքի ընկերող մի շարք հայ զերասաններ (Մարի Նվարդ, Գարագաշյան քույրերը և ուրիշներ) անցնում են Թիֆլիս, խաղում Թիֆլիսի բնմում, ձեռք բերելով մեծ հաջողություն:

Արուսյակ Փափաղյանը մնում է Կ. Պոլսում՝ ամենաթշվառ վիճակում:

Միառժամանակ հետո Պոլսում թատերական կյանքի աշխաժացման փորձեր է կատարում հայ բեմի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մարտիրոս Մնակյանը, սակայն նրան թույլ չի տրվում հայերեն լեզվով ներկայացումներ կազմակերպել:

Այսուհետեւ, մենք սիրողների հազվադեպ ներկայացումներ ենք տեսնում միայն Կ. Պոլսում հայերեն լեզվով, այն էլ թաղային դպրոցներում: Մեկ էլ 1888 թվականին, երբ Կ. Պոլիս է դալիս Պ. Աղամյանը, հատում թույլավություն է ձեռք

Եերում մի քանի հայերեն ներկայացումներ տալու:

Ահա այս ողայմաններում, հասկանալի է, որ չեր կարող մասնակցել օտար լեզվով արվող ներկայացումներին մի այնպիսի դերասանութիւն, որը չառադուխ էր հայ ազգային թատրոնի զարգացմանը: 90-ական թվականների սկզբին, այսինքն Պ. Աղամյանի կազմակերպած ներկայացումների տարիներին, Արուսյակն արդեն հիվանդ էր:

90-ական թվականներին մենք Արուսյակին տեսնում ենք ֆիզիկապես քայլքայլած, հյուծված, օրվա հացի կարուտ: Այն հասարակությունը, որը 60-ական թվականների սկզբներից հիացմունքի առարկա էր զարձրել Արուսյակին, բուրժուական ընտանիքների ծոցից դարս ևկած այն երիտասարդները, որոնք թանկարգին նվիրներով ու փարթամ ծաղկենինչերով էին ներկայանում արտիստություն, այդ բոլորը թափում նրա ուսների տակ ու բարեկամություն աղերտում, այժմ՝ անտարբերությամբ էին դիտում Կ. Պոլսի փողոցներում թափառող, սպիտակած, զղղղված մազերով, ցնցուարների մեջ կորած, համարյա ուսաբորիկ Արուսյակին, որը մոլոր քայլերով մերթ այս նրբանցքն էր մտնում, մերթ մի այլ փողոց, ամենեին փուլը շանելով հասարակությունից թաքցնիլ իր ահավոր

թշվառությունը, որի հիմնական պատասխանատուն հենց այդ հասարակությունն էր:

Բուրժուական հասարակությունը Արուայակի այդ անտարրերությունը դեպի հասարակական կարծիքն ու կենցազային իշխաղ նորմաները՝ վերագրում է ոչ թե նրա արհամարհանքին ու զգվանքին դեպի այդ բոլոր ազգային իշխանություններն ու հաստատությունները, այլ այն բանին, որ իր թե Արուայակը խելագարվել է, չի հասկանում, թե ինչ է անում կամ խոսում:

Եվ այսպես, բուրժուական որոշ գրչակներ Արուայակին հայտարարում են խելագարված...

«Սկյուտար», խեղճուկ հյուղակի մը մեջ,— զրում է ժամանակակիցներից մեկը, — չեմ գիտեր ինչ պայմաններով ապաստան գտած, կապրեր Շատ քիչ անգամ դուրսը կտեսնվեր, այն ատեն չորցած, վախտ կին մըն էր, որ ստվերի պես կթափառեր հոս ու հոն, մանավանդ վերջալույսի ժամերուն, վերեն վար սև ու հինուկ հանդերձներու մեջ փաթաված։ Սև շալին տակեն քաթան մաղերը կպատմեին մեզի իր հուսախարություններուն ու տառապանքներուն անբավությունը։ Իր երեսներուն կմախային փոսիկները հիանալիորեն ճիշտ կրացատրեին իր կրկնապես լքված լինելու ցավին խորությունը։ Ախ, այն ատեն ամեն մարդ կճանչ-

նար զինքը և անտարբերությամբ կըսեին իր ետևեն.

«Արուսյակն է, խենթ է»:

Ա. Արփիարյանը 1887 թվականին Արուսյակ Փափաղյանի մասին գրում է հետեւյալ ուշադրավ առղերը.

«Երբ Թիֆլիսի հանդեսներու տրձականքները մեղ կհասնին, ո՞ւր են մեր գերասանք. մենք այսիս հայ թատերական խումբը չունինք, իսկ հին խումբերու բեկորները թափառիկ կշրջին և օտար խումբերու մեջ կերպեն օտար երգեր։ Այդ հին խումբերն հիշատակ մը միայն կենդանի կմնա, տիկին Արուսյակ. անուն մը, այդ տիկին Արուսյակի անունը, որ մի քառորդ դար կկենդանացներ, կարծես, սերտ կապերով կապված է սահմանադրության առաջին տարիներու սիրո, հուստ հիշատակներու հետ։ Մի քառորդ դար առաջ նորա ոտքերուն առաջ կխոնարհվեր Պոլսո նորածիլ երիտասարդությունը. Պեշիկթաշլյան, Հեքիմյան, Թերզյան կըստեղծեին հայ թատրերգությունը։ Արուսյակն էր օրվան հերոսուհին... Զինքը տեսա մի քանի շաբաթ առաջ, նույն այն շաբաթաստիկ օրը, որում ազգային ժողովո մեջ կատակերգություն մը կատարվելով, փոքրամասնություն մը հակառակ մեծամասնության կամաց, հակառակ ընդհանուր ազգին չերմ փափաղանաց, կհաշողեր Հարություն

պատրիարքը իր գահին վրա պահել։ Անդ, վարը կուտրած աթոռին մը վրա ինկած տեսա Արուայակը, դեղադիր մը ուներ ձեռքը և կաղաշեր, որ պատրիարքանն շինել տան զայն... ոչ իսկ դեղը զնելու ստակ՝ ունի»¹։

Որ Արուայակ Փափազյանը երբեք էլ խելագար չի եղել, վկայում են ժամանակի պրոդրեսիվ մտածողներից շատ շատերը։

«Հիմա՞ր, — հարցնում է Արփիարյանը զարմանքով և պատասխանում, — այլ սակայն, որ խելացին քան զնա ավելի առողջ դատողություններ կարտագրե, որքա՞ն անեկուտներ, ինչքա՞ն դատաստաններ այն գործիշներու մասին, որոնք այսօր կղեկավարեն կամ լավ ևս կնենգավորեն աղջը»։

Արուայակը խելագար չէր, բայց դժբախտ էր, կործանված։

Ո՞րն էր նրա կործանման պատճառը. արդյոք միայն անհամապատասխան ամուսնությո՞ւնը, ընտաննեկան անախորժությո՞ւնը, թե հասարակակալան քաղաքական պայմաններն էին։

Հայ թատրոնի պատմությամբ զբաղվողներից շատերը այդ կործանման պատճառները որոնել են դերավանցապես ընտաննեկան պայմանների մեջ,

¹ «Մշակ», 1880, № 71.

մասամբ էլ թատերական ասպարեզում նրա զեմ
գուրս և կած ուժեղ մրցորդներով։ Դա սխալ է։
Արուսյակի կյանքի մանրամասնությունները բա-
րեխզճորեն քննության առնողը կարող է նկատել,
որ նա զոհն է տմհնահետամբնաց ու գաժան բռնտ-
պետական մի երկրի՝ Թյուրքիայի հասարակական
ու քաղաքական պայմանների։ Պատահական
չպետք է համարել, որ այն դերասան-դերասանու-
թիները, որոնք Թյուրքիայում հայերէն ներկայա-
ցումները արգելվելուց հետո հնարավորություն չեն
ունեցել գուրս գալու այդ երկրից, հարկադրված են
եղել մնալու այնակ, բոլորն էլ տիսուր ու ողբեր-
դական վախճան են ունեցել։ Այդպիս է եղել, ինչ-
պես տեսանք Արտայակը։ Այդպիսի ողբերգական
հակատագիր է ունեցել տաղանդավոր դերասանու-
թի Մարի Նվարդը, որը ծաղիկ հասակում հար-
կադրված եղավ թույն քնդունել և բեմում մահա-
նալ։ Նույնպիսի ողբերգական վիճակի մեջ երի-
տասարդ հասակում մահացավ տաղանդավոր կո-
միկ դերասան Գ. Ռշտունին։ Նույն բախտը վի-
ճակվեց իր կյանքի վերջին տարիները ծննդավայ-
րում անցկացնել ցանկացող Պետրոս Աղամյանին։

Միանդամայն այլ ճակատագիր ունեցան այն
դերասան-դերասանութիները, որոնք 1879—81
թվականներին կարողացան հեռանալ Թյուրքիա-
յից, ընկնել նալաստավոր պայմանների մեջ։ Այս-

պես՝ թիֆլիս, Բաքու մեկնած արևմտահայ դերասան-դերասանուհիները լայն հնարավորություն ունեցան ոչ միայն շարունակելու իրենց բնմական դործունեությունը, այլև հաղորդակից դասնալով ուստական ունալիստական արվեստին, կատարելադործելու իրենց աաղանդը։ Այդիսի ճակատագիր են ունեցել Սիրանույշը, Աղնիվ Հրաչյան, Պետրոս Ադամյանը և ուրիշներ։

Անտեղի գուշակություն չէ այն, որ եթե Արուսյակ Փափազյանն էլ դժբախտություն շունենար անպայման Թյուրքիայի հեղձուցիշ մթնոլորտում մնալու, ընկներ հայաշատ այլ քաղաքներ, մասնավորապես Կովկաս, կեարողանար ձեռք բերել խոշոր արվեստագետի համբավ։ Դրա համար անհրաժեշտ բոլոր ավալները ուներ նա։

Արուսյակի բեմական դարպացմանը շեն նոպաստել նաև Պոլսի հայ թատրոնի հնարավորությունները։ Ո՞րն էր Արուսյակ Փափազյանի ոեպերտուարը — Հերիմյանի, Թղլյանի, Մանասյանի, անգամ Պեշիկիմաշլյանի դեղարվեստական տեսակետից միանգամայն թույլ պատմական ողբերդությունները և հվրոպական մի քանի անարվեստ մելոզրամաներ («Երկու հիսնապետներ», «Նավաստի Պերաբան» և այլն)։ Բացառություն են կազմել միայն Մոլիերի մի քանի կատակերդությունները։

Կար նաև մի այլ սկատճառ։ Դա թատերական դործի այս կամ այն անհատի մենաշնորհը լինելու հանդամանքն էր։ Անդամ «Արևելյան թատրոնը», որի կաղմակերպման համար այնքան մեծ ջանքեր էին դործ դրվել, հաճախ ծառայում էր նրա զեկավարներից մեկն ու մեկի քմահամ մոտեցմանը։

Մրանք, ինչպես տեսնում ենք, ժամանակի հասարակական հարաբերությունների արդյունք հանդիսացող այնպիսի հանգամանքներ էին, որոնք արգելակում էին և՝ հայ թատրոնի զարգացմանը, և՝ այդ թատրոնին նվիրված մարդկանց հաջողությանը։

Քայլ առ քայլ հետեւելով Արուսյակ Փափաղյանի կյանքի հիմնական դեպքերին, մենք տեսնք, որ այդ կյանքը ամբողջությամբ մի պայքար էր ոչ միայն ընտանիքում։ Սովոր Պեղիրճյանի դեմ, այլ և հասարակական կյանքում այն մարդկանց դեմ, որոնք ստրկամտորեն ծառայելով սովորական կառավարությանը, կատարելով նրա քաղաքական առաջադրանքները, գիտակցաբար թև անգիտակցաբար հանգես էին դալիս ընդդեմ հայ նորաստեղծ ազգային թատրոնի։ Այլ խոսքով Արուսյակ Փափաղյանը, Ս. Հեքիմյանը, Հ. Սվաճյանը և ուրիշները անհամեմատ ավելի լայն ճակատի վրա պայքար էին մղում, քան այդ արձանագրված է հայ թատրոնի պատմության մեջ։ Ըստ

էության տեսական ու համառ մարտերը մղվում էին ոչ թե կնտիկ փաշայում հիմնադրված Վարդովյանի «Օսմանյան թատրոնի» դարբասների տակ, այլ նույն ինքն Սուլթան Համիդի անիծյալ որջը հանդիսացող Յըլղըզի պալատի պարիսպների տակ, որտեղից էին դուրս սողոսկում հայ ազգային թատրոնը իր խանձարուրի մեջ խեղդելու նպատակ ունեցող որոշումներն ու կարգադրությունները:

Այսպիսով, Արուսյակ Փափազյանի բնմական կյանքի խորտակումը բացառապես կապված է համիդյան բռնապետական ծանր ռեժիմի հետ:

* * *

900-ական թվականների սկզբներին՝ ձանձրացած Արուսյակի ամենօրյա դժգոհություններից ու հրապարակային նախատինքներից, բուրժուական մամուլը ժամանակից շուտ փորձում է ավետել Արուսյակի մահը: Այն մարդիկ, որոնք տասը տարի առաջ միանդամայն առողջ բանականության տեր Արուսյակին հոշակում էին խելագար, նույն այդ մարդիկ տարօրինակ փութեկոտությամբ մամուլում հայտարարում են, որ Արուսյակ Փափազյանը մեռել է, մինչդեռ նա դեռ ողջ էր և պառկած՝ Աղքային հիվանդանոցում:

Արուսյակը չէր տանջվում որևէ ծանր հիվանդությամբ. տարիների տառապալից կյանքը այն-

քան էր հյուծել, քայլայի արդեն զառամյալ տարիքի հասած դերասանություն, որ նա, զուրկ որիէ հոգատար ձեռքի խնամքից, միայն Աղգային հիվանդանոցի նրբանցքներում կարող էր սպառել իր տիտր կյանքի վախճանին: Բայց նույնիսկ այդ օրերին նրան այցելողները մամուլում հրատարակած իրենց հոգվածներում վկայում են, որ Արուսյակը մինչև իր կյանքի վերջին բողենները եղել է մտքով պայծառ:

Արևամտահայ թատրոնի պատմաբաններից Սմբատ Դավթյանը 1903 թվականին Աղգային հիվանդանոցում այցելելով Արուսյակ Փափազյանին, իր տպավորությունները հրատարակում է «Մանղումեկի էֆքյար» օրաթերթում, որտեղ գրում է.

«Իր երեխմնի վառվուն խոսվածքին ու շարժու ձևերուն, իր իմացականության հաջորդած է հիմա խաղաղ բնավորություն մը, հոգնած ալեծուփ կյանքի մը ելեէջներին: Իր այս ծյուրած ու նվազուն վիճակին մեջ ալ... աղնվական հով մը կա Արուսյակին վրա»:

Ս. Դավթյանի հոգվածի հետագա մասերից երեսում է, որ Արուսյակն այդ օրը երկար խոսել է Դավթյանի հետ, իմանալով, որ նա մտադիր է դրել հայ թատրոնի պատմությունը, հետևաբար և դրել իր մասին, վառ հիշողությամբ ձշաել է իր կենսադրության հետ կապված մի շարք փաստեր:

Այնուհետև մի քանի տարի Արուսյակ Փափաջանը մնում է Ազգային Հիվանդանոցում։ Նրա կյանքի այդ վերջին տարիների մասին քիչ բան պիտենք։ Մերթ ընդ մերթ ժամանակի պարբերական մամուլում կցկուուր տողեր են գրվում նրա մասին, որոնցից կարելի էր միայն իմանալ, թե զիսես չի դադարել բարախելուց Արուսյակի սիրութը։

Ու մի օր էլ, 1907 թ. ապրիլի վերջերին, Պոլսի հայ թերթերում երևում է մի կարճ հաղորդում, որը հայտնում էր Արուսյակ Փափաջանի մահը։ Ահա այդ հաղորդումը։

ԱջԴ

Ա. Փրկչյան ազգ. Հիվանդանոցիս տնօրենությունը ցավ ի սիրու կծանուցանե ձեզ ծանոթ դեռասանուհի տիկին Արուսյակ Պեղիրճյանի մահը, որ տեղի ունեցավ այսօր՝ շարաթ։ Հուղարկավորությունը պիտի կատարվի երկուշարթի, 30 ապրիլ, կեսօրե վերջ, ժամը 6-ին, Հիվանդանոցիս Ա. Փրկչի, եկեղեցվույն մեջ։

Եղիկուկե, 28 ապրիլի 1907։

Տնօրեն Հակոբ Համամճյանը։

Նույն այդ մամուլից տեղեկանում ենք, որ «ծանոթ գերասանուհու» Հուղարկավորությունը կատարվել է ամենաանծանոթ մարդու անշուրությամբ։ Արվեստի սիրահար մի քանի երիտասարդներ, որոնք գուցե Արուսյակին ընմի վրա ծափահարելու բախտ էին ունեցել, մասնակցել են այդ հուղարկավորությանը, իրենց վերջին հարգանքը մատուցանելով այն արտիստուհուն, որը իր բեմական գործունեության ամբողջ ընթացքում պայքարել էր Հայ ազգային թատրոնի զարգացման համար։

Այսպես, անփառունակ կերպով գերեզման է իշնում Արուսյակ Փափազյանը։

Ավագ քրոջ մահից մի քանի տարի հետո 1913 թվականին նույնպիսի անմիտիթար միճակում է Աղավնի Փափազյանը, նույնպես լրիված, նույնպես մոռացված։

* * *

Արուսյակ Փափազյանը Հայ թատրոնի պատմության մեջ իր արժանի տեղն ունի որպես արևմբռտահայ առաջին պրոֆեսիոնալ դերասանուհի։ Անխղելիորեն նրա անվան հետ է կապված տեական այն պայքարը, որ արևմտահայ պրոգրեսիվ ինտելիգենցիան մղել է սովորական բռնապետական կարգերի դեմ՝ հանուն Հայ ազգային թատրոնի զարգացման։

Պատ. խմբագիր Ա. Մելիքսերյան
 Հրատ. խմբագիր Էմ. Պիվազյան
 Տեխ. խմբագիր Մ. Կափլանյան
 Կոնսուլ ուղարագրիչ Ա. Շաղգամյան

Խէմ Ա 245	Հքոս. Ա 1148	Գառվեց 78	Վ. Հ 10060
Հանձնված է արտադրության 19/11 1955 թ., ստարագրված է ապագրության 5/IV 1955 թ., Տիրամ 3000, հրատ. 3 մամուկ, աղազը. 3,6 մամուկ + 5 ներդիր, բռւղը 70×92 ^{1/23}			
		Գիշ 1 ռ. 35 կ.	

Հայկական ՍՍԾ ԳԱ Հքոսութակներյան առաքանի, Երևան, Արևիլոն, 124:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037464

